AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:45 PM Page 1

Azg Ազգ

13 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՇԱԲԱԹ 25 (4406)

ISSN: 1829-1651

Արձանագրությունները երեկ մտան Ազգային ժողով

Հայ-թուրքական Արձանագրությունները քննարկման եւ հնարավոր վավերացման համար երեկ ուղարկվել են Հայաստանի խորհրդարան: Այս տեղեկությունը հաստատել է նախագահի մամուլի քարտուղար Սամվել Ֆարմանյանը: Նա նաեւ ավելացրել է, որ ԱԺ-ում քննարկումների ժամանակ նախագահին կներկայացնի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

Իսկ Ազգային ժողովում, ընթացակարգի համաձայն, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը երկու օրում պետք է նշանակի հանձնաժողով, որտեղ եւ կքննարկվեն Արձանագրությունները: Այնուհետեւ փաստաթղթերի քննարկումը կշարունակվի բոլոր պատգամավորների մասնակցությամբ:

Հայերը մեծ աշխեր ունեն ու քիթ՝ կորեացիների համեմաս

Կորեայի դեսպանը Հայաստանից հեռանում է հայ-կորեական համագործակցությանը Սեուլից էլ աջակցելու ցանկությամբ

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանում Կորեայի Հանրապետության դեսպան Քյու-Յունգ Լին ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը մեր երկրում: Երեկ նա Երեւան այցելությանը հանդիպել է Հայաստանի վարչապետին, նաեւ արտգործնախարարին: Կառավարության պաշտոնական կայքէջի համաձայն, վարչապետը գոհունակությամբ է խոսել հայ-կորեական հարաբերությունների ներկայիս մակարդակի մասին՝ ընդգծելով, որ Հայաստանը մեծ կարեւորություն է տալիս Կորեայի Հանրապետության հետ երկկողմ համագործակցության ընդլայնմանը:

Անդրադառնալով առեւտրատնտեսական համագործակցությանը՝ վարչապետն անհրաժեշտ է համարել իրավական դաշտի ձեւավորումը, գործարարների միջեւ անմիջական շփումների հաստատումը, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը եւ կորեական ընկերությունների ներդրումների խրախուսումը Հայաստանում մեծածավալ ենթակառուցվածքային տնտեսական ծրագրերի իրականացման գործում, ինչպես, օրինակ, կորեական ընկերության մասնակցությունը Երեւանի ՋԵԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությանը: Տիգրան Սարգսյանն ընդգծել է, որ հաշվի առնելով երկաթգծերի նախագծման եւ կառուցման կորեական հարուստ փորձը՝ Հայաստան-Իրան երկաթուղին

Դեսպան Քյու-Յունգ Լի եւ Հայաստանում Կորեայի պատվավոր հյուպատոս Արմեն Աբրահամյան

նույնպես կարող է հետաքրքրություն ներկայացնել կորեական ընկերությունների համար:

Դրական գնահատելով դեսպանի պաշտոնում Քյու-Յունգ Լիի գործունեությունը՝ նախարար Նալբանդյանը գոհունակություն է հայտնել Հայաստանի եւ Կորեայի արդյունավետ համագործակցության եւ համատեղ իրականացրած ծրագրերի կապակցությամբ: Հաջողություն մաղթելով դեսպանին՝ նախարար Նալբանդյանը, ի նշանավորումն հայ-կորեական հարաբերությունների զարգացման գործում նրա ունեցած ներդրման՝ Քյու-Յունգ Լիին պարգեւատրեց ԱԳՆ հուշամեդալով:

Ներկայացնում ենք Կորեայի դեսպան Քյու-Յունգ Լիի հարցազրույցը «Ազգին»՝ հիմնական տպավորությունների մասին: *Տես էջ 2*

Հակերները կոտրել են «Ակօս» թերթի ինտերնետային կայքը

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրք ազգայնական հակերները կոտրել են Ստամբուլի հայալեզու «Ակօս» թերթի ինտերնետային կայքը:

Թուրքական «Վաթան» թերթի տեղեկացմամբ, հակերները կայքի առաջին էջում տեղադրել են 2007-ի հունվարի 19-ին թուրք ազգայնական շրջանակների կողմից դավադրաբար սպանված «Ակօսի» խմբագրապետ Հրանտ Դինքի ոճրագործ Օգյուն Սամաստի՝ Սամսունում ոստիկանական բաժանմունքում կատարված լուսանկարը: Լուսանկարի տակ թերթի խմբագրատանն ուղղված սպառնալիքում գրված է՝ «Ողջույններ Օգյուն Սամաստին», «Կամ սիրիր, կամ՝ լքիր», «Նոր Օգյուն Սամաստերը ճանապարհին են» արտահայտությունները:

Սարիբեկ Սուքիասյանը բերման է ենթարկվել

ՖՈՏՈԼՈ

«Պանորամա.ամ»-ի տեղեկացմամբ՝ երեկ, ժամը 17.30-ին, ոստիկանության Էրեբունու բաժին է դիմել «Աուդիս» ՍՊԸ-ի տնօրեն Գոռ Դավթյանը եւ հայտնել, որ 2008 թվականի հոկտեմբերին իրեն պատկանող «Բյուրեղ» ՓԲԸ-ի 41 տոկոս բաժնետոմսերը վաճառել է Սարիբեկ Սուքիասյանի կնոջը՝ Ասպրամ Տոնոյանին:

Ոստիկանության տեղեկատվության համաձայն՝ 2009 թվականի նոյեմբեր ամսին հանրապետության գործարքն անվավեր է ճանաչել, ինչից հետո ՓԲԸ-ում հայտնվել է նոր բաժնետեր, որը ցանկություն է հայտնել գնել բաժնեմասերը: Այդ մասին Սարիբեկ Սուքիասյանին տեղյակ պահելու նպատակով Գոռ Դավթյանը փետրվարի 12-ին, ժամը 13.00-ի սահմաններում գնացել է «Սիլ գրուպի» գրասենյակ, որտեղ Սուքիասյանն ու ոմն Արտաշ սպանության իրական սպառնալիքների տակ նրան պարտադրել են ստորագրել բաժնեմասերի հետ կապված որոշ փաստաթղթեր:

Երեկ՝ ժամը 18-ին Ս. Սուքիասյանը եւ «Այրարատ» տնավաճառի տնօրեն Ա. Ստեփանյանը բերման են ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին:

Քննությունը վարում է Էրեբունու քննչական բաժինը:

ՀԱՍԱՐՈՍ

Ադրբեջանի ԱԳՆ-ն արձագանքեց Սերժ Սարգսյանի ելույթին

Մեծ Բրիտանիայում՝ «Chatem House»-ում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ունեցած ելույթին է երեկ արձագանքել Ադրբեջանի ԱԳՆ-ն: «Ադրբեջանը չի կարող թույլ տալ, որ ԼՂ բանակցությունները շարունակվեն հետագա 15-20 տարիներին: Այսօրվա սատուս քվոն աշխարհում ոչ մեկին չի բավարարում, բացի, երեւի, Հայաստանից: Հարցը պետք է լուծվի կոնկրետ ժամանակային շրջանակներում», ասված է հայտարարության մեջ:

Ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ նշում են, որ Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարել է, որ իրադարձությունները կարող են անկանխատեսելի զարգացում ունենալ, որի պատասխանատվությունը կկրի բանակցային սեղանի շուրջը «ոչ կառուցողական դիրքորոշում ցուցաբերող կողմը՝ Հայաստանը»

Սերժ Սարգսյանն ընդունել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարին

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային: Քննարկվել են ՀԱՊԿ շրջանակում համագործակցությանն առնչվող հարցեր:

Կողմերը գոհունակություն են հայտնել 2009թ. կազմակերպության ընդունած եւ իրագործած առանցքային որոշումների, մասնավորապես, ՀԱՊԿ անդամ երկրների կողմից արագ արձագանքման համատեղ ուժերի ստեղծման համաձայնագրի ստորագրման կապակցությամբ:

Զրուցակիցները նաեւ կարեւորել են ՀԱՊԿ կառույցների ձեւավորման գործընթացում առկա աշխույժ դինամիկան եւ վստահություն են հայտնել, որ 2010-ին եւս կպահպանվի այն, ինչպես նաեւ կամբողջացվի դրանից բխող իրավապայմանագրային դաշտը:

ՀՀ պաշտպանության նախարարի այցը Ֆրանսիա շարունակվում է

Փետրվարի 11-ին Ֆրանսիայում գտնվող Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպել է Ֆրանսիայի նախագահի ռազմական հատուկ գրասենյակի ղեկավար, ծովակալ Էդուարդ Գիյարին: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ ռազմական համագործակցության ծրագրերը եւ Փարիզում օրերս ստորագրված համաձայնագրի դրույթները: Անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային անվտանգության խնդիրներին, ինչպես նաեւ հավանական զարգացումներին արձագանքելու հնարավորություններին: Օհանյանը շնորհավորել է Գիյարին՝ Ֆրանսիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Նույն օրը Հայաստանի պաշտպանության նախարարը մասնակցել է Փարիզի Հաղթական կամարի մոտ կազմակերպված պսակադրման արարողությանը, ինչպես նաեւ այցելել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած ցուցահանդեսին, որտեղ ներկայացված են եղել նկարիչ եւ քանդակագործ Արտո Չաքմաքչյանի գործերը:

«Հայաստան-Թուրքիա գործընթացը՝ ձախողման շեմին»

Գրում է Դեյվիդ Փիլիպը «Բոստոն գլոբ» թերթում

Հ. ՉԱՔԲԱՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձով եւ ուղերձին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի պատասխանով հայ-թուրքական Արձանագրությունները վերստին օրակարգի առաջնային խնդիրը դարձան Հայաստանում: Որպես կանոն, երբ Հայաստանում օրակարգի խնդիր են դառնում Արձանագրությունները, ընդդիմադիր ուժերն իսկույն աշխուժանում են, օգտագործելու համար դրանք իբրեւ քաղաքական միավորներ վաստակելու, ազգային հարցերի նկատմամբ թվացյալ զգոնության հավելյալ դրսեւորումներով դրա մենաշնորհը ձեռքում պահելու եւ իշխանության դեմ պայքարելու արդյունավետ միջոց:

Նման մոտեցումն անխուսափելիորեն հանգեցնում է ինչպես Արձանագրությունների, այնպես էլ դրանց նկատմամբ հայկական կողմի որդեգրած դիրքորոշման անխնա շահարկմանը, իսկ շահարկումները, կամա թե ակամա, նպաստում են ոչ միայն Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացից Թուրքիայի ակնկալած նկրտումների հիմնավորմանը, այլեւ ընդլայնում են գործընթացը սեփական շահերին ծառայեցնելու թուրքական կողմի հնարավորությունները:

Մինչդեռ ձախողվում են Լեռնային Ղարաբաղում «առաջընթաց» ապահովելու համար Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջոցով Հայաստանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը ղարաբաղյան հակամարտության՝ ի նպաստ Ադրբեջանի կարգավորմանը հանգեցնելու Անկարայի հաշվարկները: Դա ենթադրում է նորմալացման գործընթացի ձախողումը, եւ Թուրքիային կարծես չի հաջողվում խուսափել ձախողման պատասխանատվությունից:

Այլ կերպ, հայ-թուրքական Արձանագրությունների շուրջը Հայաստանի համար բարենպաստ իրավիճակ է ձեւավորվում, դրական է նաեւ քաղաքական զարգացումների ընթացքը միջազգային առումով: Մնում է, որ ընդդիմադիր մեծ ու փոքր ուժերը զերծ մնան ավելորդ շահարկումներից:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Թուրքիա-Հայաստան գործընթացը ձախողման շեմին» վերնագրով «Բոստոն գլոբի» նախավերջին համարում Դեյվիդ Ֆիլիպսի հրապարակած հոդվածին, որի մասին տեղեկացրել է թուրքական «Դունյա Բյուլթենի» լրատվական գործակալության պաշտոնական կայքէջը: Ահա թե ինչ է գրել.

Տես էջ 3

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:46 PM Page 1

«Մեր մանկության երազանքը չէ հայ-թուրքական բաց սահմանը»

Ազգային ժողովում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցության խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը հենց այսպես որակեց Թուրքիայի հետ տարվող գործընթացները: Ավելին, Սահակյանի կարծիքով «ողջամիտ ժամկետները» սպառվել են, եւ Հայաստանը վճռականորեն կարող է հետ կանչել Արձանագրությունների իր ստորագրությունը. «Հենց այս նպատակով էլ երեկ կառավարությունը հավանություն տվեց միջազգային պայմանագրերի օրենքում փոփոխություններ կատարելու օրինագծին», շեշտեց Սահակյանը: Իսկ գործընթացի կասեցումը, ըստ հանրապետական գործչի, կնշանակի միայն Թուրքիայի դիվանագիտական պարտությունը, Հայաստանը որեւէ կորուստ չի ունենա. «Բան չենք գտել, որ կորցնենք», նկատեց Սահակյանը:

Իսկ թե ի՞նչ կարիք կա, այդ դեպքում, նախագահի որոշմամբ Արձանագրությունները ԱԺ ուղարկելու, Սահակյանը «բացատրեց», որ դա զուտ տեխնիկական հարց է եւ այսօր անպայման կմտնի խորհրդարան: «Մինչեւ Մեջլիսը չվավերացնի Արձանագրությունները, մենք դրանք չենք էլ քննարկելու», վստահեցրեց Գալուստ Սահակյանը: Պատգամավորը հայտարարեց, որ Թուրքիայի կողմից վավերացման գործընթացի նկատելի ձգձգումը շարունակական լինելու դեպքում Հայաստանը, հետ բերելով իր ստորագրությունը, նոր գործընթաց կսկսի Թուրքիայի հետ. «Քանի որ մենք թուրքերի հետ բավականին տեւական հարցեր ունենք, որոնք իրենց լուծումն են պահանջում», նշեց Սահակյանը՝

հավելելով, որ դրանցից կարեւորագույնը, անշուշտ, Հայոց ցեղասպանության ճանաչումն է Թուրքիայի կողմից, ինչպես նաեւ հայ ժողովրդի պահանջատիրական իրավունքների հարցը. «Պետք է հասկանալ, որ այս երկու հարցերում ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը եւ այլք, ընդամենը «մանր խողովակներ» են. սա ամբողջ հայության խնդիրն է», ընդգծեց Սահակյանը:

Ղարաբաղյան հակամարտության հետ կապված, մասնավանդ Անկարայի ցանկության՝ միջամտելու այս բանակցություններում, հանրապետական գործիչը նշեց, թե այն, ինչ խոսում են Անկարայում եւ Բաքվում Ղարաբաղի մասին, Հայաստանին ոչ պետք է սարսռեցնող թվա, ոչ էլ պետք է լուրջ ընդունել. «Թուրքերն ու ադրբեջանցիներն ինչ ուզում են, թող խոսեն. նրանք նույն ժողովուրդն են, բայց Թուրքիան երբեք չի հայտնվի ղարաբաղյան բանակցությունների սեղանի շուրջը, դրան Հայաստանը, ավելին՝ Մինսկի խումբը կտրուկ դեմ են», վստահեցրեց Սահակյանը: Իսկ Հայաստանի դիրքորոշումները, ըստ հանրապետականի, ավելի պարզ ու հասկանալի դարձան նախագահ Սարգսյանի լոնդոնյան ելույթից հետո. «Դա մեր հայտարարությունն էր ուղղված ինչպես Ադրբեջանին, այնպես էլ Մինսկի խմբին. Ղարաբաղը երբեք չի կարող ունենալ ավելի ցածր կարգավիճակ, քան ունի այժմ», շեշտեց Սահակյանը: Վերջինիս խոսքերով՝ այսօր բանակցություններում առաջնահերթ քննարկվում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը. «Միայն կարգավիճակի որոշումից հետո կողմերը՝ Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությամբ, կորոշեն նաեւ «այլ հարցերի» ճակատագիրը: Ի դեպ, այս մոտեցումը ընդունում են նաեւ Մինսկի խմբի համանախագահները», հավաստիացրեց Սահակյանը՝ մեկ անգամ եւս շեշտելով, որ Ղարաբաղի հարցը վաղուց արդեն լուծված է, մենք այս առումով որեւէ խնդիր չունենք:

Ինչ վերաբերում է պատերազմի վերսկսման հնարավորությանը, ապա Գալուստ Սահակյանը դա չի տեսնում, նախ, որովհետեւ Բաքուն պատրաստ չէ դրան, ապա նաեւ. «Մինսկի խմբի համանախագահները վերջերս ընդգծեցին, որ պատերազմի վերսկսման պարագայում տարածքային ամբողջականության հարցն այլեւս չի կարող լինել քննարկման առարկա. կմնա միայն ազգերի ինքնորոշման իրավունքը», շեշտեց Սահակյանը:

ՀՈՎԻԿ ԱՔՅԱՆ

Տյառնընդառաջ կամ տրնդեզ

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրվանից 40 օր հետո մեծ հանդիսավորությամբ նշում է 40 օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տյառնընդառաջը: Տյառնընդառաջը կամ, ինչպես ժողովուրդն է ասում, Տրնդեզը, նշանակում է Տիրոջն ընդառաջ գնալ: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությամբ Տյառնընդառաջը հռչակվել է նորապսակների օրհնության օր: Տոնի խորհուրդն ու մանրամասները երեկ լրագրողներին ներկայացրեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունից Մեսրոպ աբեղա Պարսամյանը: Հայ եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին բոլոր եկեղեցիներում՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է արտերի եւ այգիների օրհնություն, օրը խորհրդանշում է ձմռան ավարտի մոտենալը եւ գարնանամուտը: Ժամերգության ավարտին կատարվում է մոմի օրհնություն: Հավատացյալները օրհնված մոմից վառում են իրենց մոմերը՝ Քրիստոսի փրկարար լույսի խորհրդանիշը տանելով իրենց հետ տուն: Ժողովրդական սովորույթի համաձայն՝ օրհնված մոմի կրակով վառում են նաեւ Տյառնընդառաջի խաչույկը:

Տյառնընդառաջի տոնը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: Տոնական Ս. Պատարագից հետո բոլոր եկեղեցիներում կատարվում է նորապսակների օրհնության կարգ՝ զորացնելու նրանց սիրո եւ հավատարմության դաշինքը: Սովորության համաձայն տոնի առիթով նվերներով այցելում են նորապսակներին, խաչույկի վրայից թռչում ու յոթ անգամ շրջանապտույտ անում՝ երազանքներ պահում: Այս տարի առաջին անգամ Տյառնընդառաջի տոնը զուգադիպել է բուն Բարեկենդանի հետ, որը սկսվում է փետրվարի 15-ին: Մեծ պահքը տեւում է 48 օր եւ այս տարի կավարտվի ապրիլի 3-ին: Իսկ ապրիլի 4-ին կնշենք Սուրբ Զատիկը:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Մեծարեցին Հրանտ Մաթեւոսյանին

Կոմիտասի անվան այգում գտնվող մեր մեծերի պանթեոնը երեկ կրկին մարդաշատ էր: Հրանտ Մաթեւոսյանի ծննդյան 75-ամյակի օրը գրողին հարգանքի տուրք մատուցելու էին եկել նրա գրչի սիրահարները, մտավորականներ, քաղաքական գործիչներ, արվեստագետներ, գրողներ, դերասաններ, ուսուցիչներ եւ դպրոցականներ: Ելույթներով հանդես եկան ՀԳ միության նախագահ Լեւոն Անանյանը, գրող-հրապարակախոս Զորի Բալայանը, դերասան Ազատ Գասպարյանը, Հրանտ Մաթեւոսյանի անունը կրող դպրոցի սաները հատվածներ արտասանեցին մեծանուն գրողի ստեղծագործություններից: Քիչ անց Հրանտ Մաթեւոսյանի շիրիմը ծածկվեց ծաղիկներով ու խնկարկվեց նրա հիշատակը:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Սուրեն Վարդանյանը՝ Դեր Զորում ՀՀ պատվավոր հյուպատոս

Սիրիայում գտնվող Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանի գլխավորած պատվիրակությունը փետրվարի 11-ին եղել է Դեր Զորում: Հայկական պատվիրակությանը ընդունել են Դեր Զորի նահանգապետ Հուսեին Արնուսը եւ Բասս կուսակցության Դեր Զորի նահանգային կառույցի ղեկավար Տահա Խալիֆան: Հիշեցնենք, որ ՀՀ փոխնախարարի՝ Սիրիա կատարած այցի շրջանակներում նախատեսված էր նաեւ Դեր Զորում բացել Հայաստանի հյուպատոսարան («Ազգ»-ը գրել է այդ մասին նախորդ համարներում): Եվ ահա Դեր Զորում Հայաստանի պատվավոր հյուպատոս է նշանակվել տեղաբնակ Սուրեն Վարդանյանը: Արարողության ժամանակ Արման Կիրակոսյանը, Հուսեին Արնուսը եւ Տահա Խալիֆան անչափ կարեւորել են հյուպատոսարանի ստեղծումը:

Նույն օրը Դեր Զորի հայկական եկեղեցում տեղի է ունեցել Հայաստանի պետական դրոշի օծման արարողությունը, որին ներկա են եղել հայ համայնքի կրոնական երեք առաջնորդները, ինչպես նաեւ՝ նահանգային իշխանությունների ղեկավարներ եւ Սիրիայի տարբեր շրջաններից ժամանած հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Եկեղեցու բակում ընթերցվել է Մեծի տանն Կիլիկիո Առաջին կաթողիկոսի շնորհավորանքը:

Արդեն հյուպատոսարանի մոտ իրենց ողջույնի խոսքն են հղել Արման Կիրակոսյանը, Սիրիայում ՀՀ դեսպան Արծակ Փոլադյանը եւ Դեր Զորի նահանգապետ Հուսեին Արնուսը:

Հ. Ա.

Տուգանված մարմնավաճառներ

«Նյուզ.ամ»-ի փոխանցմամբ՝ անցյալ տարի Հայաստանում իրավապահ մարմինները մարմնավաճառության համար վարչական իրավախախտման արձանագրություններ են կազմել 389 անձի նկատմամբ: Ընդ որում՝ նրանցից 330-ը ենթարկվել են վարչական տուգանքների:

«Նյուզ.ամ»-ը հիշեցնում է նաեւ, որ 2008-ին նման արձանագրություն էր կազմվել 445 մարմնավաճառի նկատմամբ, որոնցից 402-ն էին ենթարկվել վարչական տուգանքների:

Մարմնավաճառնե՞րն են էլացել, թե՞ նրանց բացահայտելու գործն է «բարդություններ» հանդիպում:

«Վիվասել-ՄՏՍ»-ն «ՄՏՍ» բրենդով հեռախոս է վաճառում 11900 դրամով

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերության սպասարկման բոլոր կենտրոններում սկսվել է «ՄՏՍ 236» կոչվող բջջային հեռախոսների վաճառք: Այն իր տեսակի մեջ հայաստանյան շուկայում առաջարկվող բջջային առաջին հեռախոսն է: Մոդելը չինաստանյան ZTE կորպորացիայի կողմից հատուկ մշակվել է «Վոդաֆոն» ընկերության համար եւ «ՄՏՍ» բրենդի ներքո կվաճառվի երկու օպերատորների ռազմավարական գործընկերության շրջանակներում: «ՄՏՍ 236»-ը հիմնական հնարավորություններով օժտված հեռախոս է, որի արժեքը կազմում է 11900 դրամ:

«Դասական ոճի, օգտագործման տեսանկյունից դյուրին հեռախոսն ապահովված է գունավոր էկրանով, բազմահնչյուն մեղեդիներով, լապտերով եւ առօրյա հաղորդակցմանն անհրաժեշտ բոլոր հնարավորություններով: Այն կարող է օգտագործվել միայն «Վիվասել-ՄՏՍ» ընկերության SIM քարտերի հետ: Հեռախոսի ձեռքբերման դեպքում տրվում է նաեւ մեկ տարվա երաշխիք», ասված է «Վիվասել-ՄՏՍ»-ի հաղորդագրության մեջ:

«Մենք շարունակելու ենք ընդլայնել մատչելի հեռախոսների առաջարկվող տեսականին: Այս մոդելը նախատեսված է երկրի ոչ բարձր եկամուտ ունեցող բնակչության համար, ում անհրաժեշտ են բջջային հաղորդակցության պարզ լուծումներ: Նման հեռախոսն առավել հարմար է թոշակառուներին, ուսանողներին եւ բարձր դասարանների աշակերտներին: Շուկայի տարբեր հատվածների պահանջները բավարարելու համար առաջիկայում հանդես ենք գալու համանման առաջարկություններով», այս կապակցությամբ նշել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:45 PM Page 1

Ոչ թե դիվանագիտական խաղ, այլ՝ կարծրատիպերը կոտրելու վճռականություն

Հայաստանի իշխանությունները ցուցաբերում են քաղաքական կամք՝ կարծրատիպերը կոտրելու ու Թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու առումով: Երեկ «Հայ-թուրքական հարաբերություններ եւ միջսահմանային ռեգիոնալիզմ» թեմայով քննարկման ժամանակ նման տեսակետ հայտնեց վարչապետ **Տիգրան Սարգսյանը**:

Տ. Սարգսյանն այս առումով դրական գնահատեց հանրապետության ղեկավարի ուղերձը, ասաց, որ դա ոչ թե դիվանագիտական խաղ է, այլ դրանով երկրի ղեկավարը կրկին հաստատում է վճռականությունը՝ հարեւան Թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու: Այդպիսով նախագահը կարող է նոր էջ բացել հայ-թուրքական հարաբերություններում:

Կառավարության ղեկավարն ընդգծեց նաեւ, որ Հայաստանին այս գործընթացում աջակցում են այնպիսի գերտերություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու Եվրոպան: Վարչապետի խոսքով, եկել է պահը, որ երկու երկրների ղեկավարները քաղաքական կամք ցուցաբերեն եւ առաջ շարժվեն՝ վավերացնելով Արձանագրությունները ու բացելով սահմանները:

Հանրային քննարկումը կազմակերպել էին Հայաստանում Ամերիկյան առեւտրային պալատը (AmCham) եւ Թուրքիայի Տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամը (TEPAV), Երեւանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ: Քննարկման մասնակիցներից էին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը եւ TEPAV-ի նախագահ պրոֆեսոր Գուվեն Սակը:

«Սահմանի բացումից հետո դրական հետեւանքներն ավելի մեծ կլինեն»

Կարծում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը

Հայ-թուրքական սահմանի բացումն ու Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների նորմալացումը դրական կազդեն երկու երկրների տնտեսությունների զարգացման վրա: Երեկ «Հայ-թուրքական հարաբերություններ եւ միջսահմանային ռեգիոնալիզմ» թեմայով քննարկման ժամանակ ասաց Հայաստանում ԱՄՆ դեսպան **Մարի Յովանովիչը**:

Նա նշեց, որ շատերն են խոսում, թե սահմանի բացումը բացասական ազդեցություններ կունենա հայկական շուկայի վրա: «Այդ բոլոր խնդիրները պետք է հաշվի առնել, գնահատել հնարավոր մարտահրավերները: Բայց ակնհայտ է, որ սահմանի բացման դրական հետեւանքներն ավելի մեծ կլինեն», ասաց դեսպանը:

Նրա խոսքով, ոչ մի երկիր չի կարող զարգանալ եւ լինել ինքնաբավ՝ ունենալով փակ սահմաններ» կախված լինելով միայն մեկ միջանցքից: Սահմանի բացումով կնվազեն տնտեսական ու տրանսպորտային ծախսերը, կաճի մրցակցությունը, կբարձրանա հայկական ապրանքների որակը, կավելանան արտահանման ծավալները, Հայաստանի առջեւ կբացվի 70 -միլիոնանոց շուկա:

Հայաստանում ԱՄՆ դեսպանը նաեւ նշեց, որ հայկական ընկերությունները պատրաստակամություն են հայտնել մալուխներ քաշել եւ հեռահաղորդակցության կապ ապահովել. «Հետեւաբար Հայաստանը պատրաստ է էլեկտրաէներգիա արտահանել Թուրքիա», ասաց դեսպանը՝ հավելելով, որ երկու երկրների նախագահների օրերս կայացած «ուղերձային փոխանակումները» վկայում են, որ կողմերը ցանկանում են շարունակել գործընթացը:

Ն. Մ.

«Քարեկեցություն եւ խաղաղություն՝ Աբխազիային եւ նրա ժողովրդին»

«Ազգ»-ը երեկ տեղեկացրել էր, որ փետրվարի 12-ին Աբխազիայի նորընտիր նախագահ Սերգեյ Բաղապշի հրավերով Սուխում կմեկնի ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը՝ մասնակցելու Բաղապշի երդման արարողությանը:

Բակո Սահակյանը իր ողջույնի խոսքում բարեկեցություն եւ խաղաղություն է մաղթել Աբխազիային եւ նրա ժողովրդին:

Աբխազիայում նախագահական ընտրությունները կայացան անցյալ տարվա դեկտեմբերի 12-ին, հավաքելով ընտրողների ձայների 59,37 տոկոսը՝ Սերգեյ Բաղապշը վերընտրվեց Աբխազիայի նախագահի պաշտոնում:

Ամերիկացիները՝ Արցախին

«Ամերիկացիները՝ Արցախին» կազմակերպությունը (Americans for Artsakh) տեղեկացնում է, որ կազմակերպությունը պատրաստվում է ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտում եւ Շուշիում, անցկացնել թրեյնինգներ՝ կառավարական կառույցների աշխատակիցների, երիտասարդ առաջնորդների եւ այլ խմբերի համար:

Թրեյնինգների ծրագիրը մշակել են Հարվարդի համալսարանի մասնագետները: Լավագույն ուսանողները, ովքեր կներկայացնեն սեփական ծրագրեր, կստանան դրամաշնորհներ:

Հ. Ա.

«Հայաստան-Թուրքիա գործընթացը՝ ձախողման շեմին»

1-ին էջից

«Դեյվիդ Ֆիլիպս ստորագրությամբ հոդվածում հեղինակը գրում է. «Քանի դեռ հայ-թուրքական Արձանագրությունները չեն վավերացվել երկու երկրների խորհրդարաններում, նորմալացման գործընթացը տապալման շեմին է լինելու: Նման զարգացումը կարող է սրել հարեւան պետությունների միջեւ առկա լարվածությունը, միաժամանակ հետ կշպրտի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանն ուղղված ջանքերը»:

«Թուրքիա-Հայաստան ձախողման շեմին» վերնագրով հոդվածում հեղինակը հիշեցնում է Հայաստանի Սահմանադրական դատարանի Արձանագրությունների առնչությամբ վերապահումներով ընդունած որոշմանը թուրքական կողմի առարկման, ինչպես նաեւ պատճառաբանության մասին, թե դա իր մեջ նախապայմաններ է պարունակում եւ Արձանագրությունները շեղում են բուն նպատակից:

Ապա հեղինակը շարունակում է. «Իրականում նախապայմաններ առաջադրող կողմը Թուրքիան է, որովհետեւ նա, ելնելով Արձանագրությունների հավելվածի պատմական հարցերի ենթահանձնաժողով ստեղծելու դրույթից, համառորեն փորձում է վիճարկելի դարձնել Հայոց ցեղասպանության եղելությունը»:

Հոդվածագիրը միաժամանակ կարծիք է հայտնում, որ առիթը՝ «չպետք է բաց թողնել եւ չպետք է հայ-թուրքական սահմանների բացման հարցը շաղկապվի ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հետ, բայց շաղկապվում է»: Այնուհետեւ հեղինակն ավելացնում է. «Եթե ԱՄՆ Կոնգրեսն ընդունի Հայկական բանաձեւը, ապա Թուրքիան արդարացի կհամարի Արձանագրություններից հրաժարվելը, նույնիսկ կարճաժամկետ քաղաքական միավորներ կշահի վարչապետ Էրդողանը: Այդպիսի զարգացումը կգրգռի նաեւ թուրք ընտրողների ազգայնական զգացումները»:

Վերջում հոդվածագիրը եզրակացնում է. «Արձանագրությունների վավերացումով Թուրքիան կվերահաստատի «հարեւանների հետ խնդիրները զրոյականի հասցնելու» դիրքորոշման անկեղծությունն ու Եվրամիության հետ հարաբերություններում կամրապնդի իր դիրքերը: Սահմանի բացումով վերջ կտրվի Հայաստանի մեկուսացվածությանն, ու դա կնպաստի երկու երկրների շահերին: ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը հնարավոր միջոցների գործադրմամբ պետք է կանխի նաեւ ամերիկյան շահերին վնասող դիվանագիտական այս նախաձեռնության ձախողումը: Նորմալացման գործընթացի ձախողումը ոչ միայն կմթագնի ԱՄՆ-ի հեղինակությունը, այլեւ կվնասի թուրք-ամերիկյան հարաբերություններին այն ժամանակ, երբ Իրաքի, Աֆղանստանի, Իրանի հարցերում Վաշինգտոնը Թուրքիայի աջակցության կարիքի մեջ է»:

Հայերը մեծ աչքեր ունեն ու քիթ՝ կորեացիների համեմաս

1-ին էջից

- Պրն դեսպան, ավարտում եք Ձեր առաքելությունը որպես Կորեայի դեսպան Ռուսաստանում եւ Հայաստանում: Դեսպանի պաշտոնում Ձեր վերջին այցելությունն է: Ի՞նչ օրակարգ ունի այս այցելությունը:

- Սա արդեն վեցերորդ այցելությունս է Հայաստան: Կարելի է համարել, որ մեր երկրների հարաբերությունները սերտացել են վերջին երեք տարում: Որպես դեսպան ես այստեղից մեկնում եմ, բայց կուզենայի կրկին տեսնել իմ այստեղի մտերիմներին, ծանոթներին: Հանդիպել եմ Հայաստանի վարչապետին, նաեւ արտգործնախարարի, էներգետիկայի նախարարի, Հայաստանում Կորեայի պատվավոր հյուպատոս Արմեն Աբրահամյանի հետ: Մենք բոլորս համաձայնեցինք, որ մեր երկրների հարաբերություններն իսկապես ավելի սերտ են դարձել՝ առավել հեռանկարային աղագայով:

- Որո՞նք են հայ-կորեական հարաբերությունների զարգացման հիմնական ներուժ ունեցող ոլորտները:

- Ամենից առաջ պետք է զարգացնել մարդկանց փոխանակման ուղղությունը: Ներուժ ենք տեսնում նաեւ էներգետիկայի ոլորտում համագործակցության համար, քանի որ կա կորեական ընկերության մասնակցության օրինակը Երեւանի ՋԵԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությանը, ինչի առնչությամբ իր գոհունակությունը հայտնել է Հայաստանի վարչապետը: Իմ տեղեկություններով, Հայաստանին դեռ պետք կլինեն նման էլեկտրակայաններ, որոնց շինարարությանը ցանկալի կլիներ կորեական ընկերության մասնակցությունը, որն արդեն Հայաստանում աշխատելու փորձ ունի: Հայաստանի վարչապետին ներկայացրել եմ Կորեայի կառավարության կողմից մի շարք, այդ թվում՝ տեխնիկական օգնության, ծրագրերի իրականացումը՝ առանձնակի կարեւորելով «Կորեական միջազգային համագործակցություն» (KOICA) կառավարական գործակալության կողմից 1994 թվականից սկսած Հայաստանի պետական ծառայողների համար տարբեր դասընթացների կազմակերպումը: Հույս ունեմ, որ այս ծրագրով մարդկանց փոխանակմամբ ավելի շատ հայեր կմասնակցեն՝ ընդլայնելով համագործակցությունը:

- Ինչպե՞ս է Կորեան վերաբերվում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանն ուղղված գործընթացին եւ դարաբաղյան հարցի կարգավորմանը:

- Ես ուրախ եմ առաջընթաց տեսնելու հայ-թուրքական հարաբերություններում: Հույս ունեմ, որ Արձանագրությունները հնարավորինս շուտ կվավերացվեն, ու երկու երկրները կկարողանան կառուցել իրենց հարաբերությունները: Ինչ վերաբերում է դարաբաղյան հարցի կարգավորմանը, ապա իմ կառավարությունը հստակորեն արտահայտել է իր մոտեցումը. մենք ցանկանում ենք տեսնել այս հակամարտության խաղաղ կարգավորումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ ու շրջանակներում:

- Երեք տարի դեսպան լինելով՝ ինչպե՞ս կգնահատեք հյուպատոսության ատաքանքը, հատկապես որ վերջերս նշվեց հյուպատոսության հիմնադրման 5-ամյակը:

- Նախորդ տարի մենք բարձր գնահատական տվեցինք հյուպատոսության ատաքանքին, մեր արտգործնախարարությունը պարգեւատրել է պատվավոր հյուպատոսին, որի աջակցությամբ դեռեւս անցյալ տարվա նոյեմբերին կորեական մշակութային հարուստ ծրագիր ներկայացվեց Հայաստանում: Նաեւ պատվավոր հյուպատոսության օգնությամբ ու աջակցությամբ է, որ, չնայած փոքր ծավալներին, բայց մեր երկրների միջեւ ապրանքաշրջանառությունն աճում է: Սովորաբար պատվավոր հյուպատոսության համար մեզանում հինգ տարի ժամկետ է նախատեսված, դեկտեմբերին այդ ժամկետը լրացել է Հայաստանում պատվավոր հյուպատոսի համար, բայց ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվել է, ինչն էլ վկայում է հյուպատոսության ատաքանքը բարձր գնահատելու մասին:

- Ինչպիսի՞ն է Հայաստանը Ձեզ համար՝ այցելությունների տպավորություններով:

- Այս այցելությամբ ռեստորաններից մեկում էինք, հայկական երաժշտություն էր հնչում, ու թեեւ առաջին անգամ էի լսում, բայց շատ հարազատ զգացի: Հայկական պարերն էլ ես փորձում եմ նմանակել, պարել, թեեւ այնքան էլ լավ չի ստացվում: Մեր դեմքերը տարբեր են. հայերը մեծ աչքեր ունեն ու քիթ, բայց հոգով ու մշակույթով մենք մոտ ենք: Արարատ լեռը ձեզ համար յուրահատուկ է, այդպիսի լեռ ունենք Հարավային Կորեայում, ու ես զգում եմ այն, ինչ հայերը՝ Արարատին նայելիս: Մեր ժողովուրդների պատմության մեջ էլ նմանատիպ պահեր կան: Ես իմ դիվանագիտական գործունեության ընթացքում բազմաթիվ երկրներում եմ ծառայել ու այցելել, բայց առաջին անգամ է, որ որեւէ երկրում լինեմ վեց անգամ: Սեուլ վերադառնալով ես կաշխատեմ նպաստել հայ-կորեական հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը:

- Ինչպիսի՞ն եք տեսնում Հայաստանի հետ Ձեր կապն ապագայում:

- Որպես դիվանագետ սա իմ վերջին առաքելությունն էր: Ես վերադառնալու եմ Սեուլ: Մեր խորհրդարանում հայ-կորեական բարեկամության խումբ կա, ինչպիսին չկա սոցիալական ոլորտում: Եթե նման միություն բացվի, ապա ես որեւէ կերպ մասնակից կդառնամ այդ նախագծերին:

- Օգտվելով առիթից՝ պրն Աբրահամյան, Դուք ինչպե՞ս կգնահատեք ձեր համագործակցությունը:

- Վերջերս նշեցինք պատվավոր հյուպատոսության հնգամյակը: Պարոն Լիի հետ ամենաերկար համագործակցությունն է ու արդյունավետը՝ երեք տարի: Շնորհակալությամբ պարոն դեսպանից եւ Կորեայի արտգործնախարարությունից՝ ասեմ, որ փորձում ենք անել հնարավորը: Պրն Լիի հետ մեր աշխատանքային համագործակցությունը ձեւավորել է նաեւ ընկերական հարաբերություններ, ու ափսոս, որ Կորեայի կանոններով երեք տարին է դեսպան լինելու ժամկետ, այլապես մեր համագործակցությունը կշարունակեինք: Կորեայի դեսպանի հետ աշխատանքի ընթացքում ես նաեւ սովորել եմ ինչպես դիվանագիտական, այնպես էլ համագործակցային հարաբերություններում անհրաժեշտ ամենը ու վստահ եմ, որ այս երեք տարվա աշխատանքը ամուր հիմք է հետագա համագործակցության ու հայ-կորեական հարաբերությունների զարգացման համար:

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:22 PM Page 1

Տարաբնույթ

Արտաքին տեղեկատվական պատերազմը չի կարելի վերածել ներքաղաքական պայքարի

Ղարաբաղի խնդիրը չեխական հեռուստատեսության եթերում

Չեխ հեռուսալրագրող Պետրուշկա Շուստրովան եւ իր թիմն անցած տարվա ամռանը Երեւանում, Բաքվում եւ Լեռնային Ղարաբաղում նկարահանեցին եւ այս տարվա հունվար ամսվա ընթացքում չեխական հեռուստատեսությամբ եթեր հեռարձակեցին «Հարավային Կովկասի ցավոտ կետերը» երեք մասանոց ֆիլմը՝ նվիրված ղարաբաղյան հիմնախնդրին: Ֆիլմերից առաջինը նվիրված էր Ադրբեջանի տեսակետին, երկրորդը՝ Ղարաբաղի, եւ երրորդը՝ Հայաստանի: Նշված հաջորդականությամբ էլ ֆիլմերը ցուցադրվեցին չեխական հեռուստատեսությամբ՝ շաբաթական պարբերականությամբ:

Ի տարբերություն «Եվրոնյուզ» հեռուսաընկերության աղմուկ հանած ռեպորտաժների, որոնցից մեկը՝ Ղարաբաղ- Հայաստանը, եթեր էր գնացել 2009-ի նոյեմբերին, իսկ ադրբեջանականը՝ այս տարվա փետրվարին, եւ հասկացվեց վերջինում ոչ մի խոսք չկար հայկական տեսակետի մասին, ապա այս երեք չեխական ֆիլմերն էլ սկսվում էին հակամարտության մասին կարճ բացատրությունից՝ իբրեւ խորհրդանիշ վերցնելով Բաքվից ոչ հեռու գտնվող Յան Արդաք բնակավայրը, ուր Հնդկաստանից կրակ են բերում, ինչը պատերազմի խորհրդանիշն է: Ֆիլմի հեղինակի կարծիքով, կողմերից յուրաքանչյուրն այնպես է ներկայացնում խնդիրը, որ կարծես տարբեր կոնֆլիկտների մասին են խոսում: Հայերն ասում են, որ ազատագրել են, ադրբեջանցիներն ասում են՝ օկուպացրել են: Հակամարտությունը տվել է 25 հազար զոհ, 10 հազար վիրավոր, մեկ միլիոնից ավելի փախստական: Հեղինակը սեփական կարծիքը չի պարտադրում հեռուսադիտողին, այլ ձայնը տալիս է տեղացիներին: Ադրբեջանական կողմը բնականաբար խոսում է հայկական տարածքային ագրեսիայի մասին, ցույց են տալիս խեղճ ու կրակ փախստականներին, որոնք երազում են վերադառնալ իրենց տները, իսկ ադրբեջանցի դիվանագետն ավելի առաջ է գնում եւ հայտարարում սադրիչ մի միտք, որպեսզի դրանով հայերի դեմ տրամադրի նաեւ արեւմտյան հեռուսալսարանին՝ «Հայերը պորում են աբխարհի ութսունից ավելի երկրներում, եւ պատկերացնում եք, եթե ամեն տեղ նրանք ցանկանան իրենց առանձին պետությունը հռչակել», ասում է նա, իսկ **Լեյլա Յունուսովան՝** Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչը, ավելի է առաջ գնում եւ հայտարարում, որ Ղարաբաղի 110 հազար ղարաբաղցիների պատճառով տուժեցին ե՛ւ հայերը, ե՛ւ ադրբեջանցիները: Հին, ծանծաղված մտքեր, որ հնչում են նորից ու նորից: Այլ զրուցակիցներ էլ պնդում են, որ եթե խնդիրը խաղաղ ճանապարհով չլուծվի, իրենք պատերազմ կսկսեն: «Մենք հայերին ոչ մի մեծ հող չենք տա», ասում է նրանցից մեկը:

Պետք է ընդգծել, որ թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմերում խոսում են հիմնականում ոչ կառավարական կազմակերպությունների եւ հասկացվեց Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչները: (Ֆիլմի ստեղծմանը երեք հանրապետություններում աջակցել են Վահիդ Գազին, Կարեն Օհանջանյանը եւ Անահիտ Բայանդուրը): Հաջողված պետք է համարել Ղարաբաղի ֆիլմը, ուր հակամարտության ողջ պատմությունն ու լուծման տարբերակներն են առաջարկում ԼՂՀ խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլյանը (Քանի դեռ ԼՂՀ-ն չի մասնակցում բանակցություններին, խնդիրը չի լուծվի), նախկին նախագահ Արկադի Ղուկասյանը (Բաքվից ու Սումգայիթից եկած փախստականների մասին եւ կովկասյան տան մասին), Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը (Արցախի պատմության եւ հայկական ժառանգության մասին), Հելսինկյան կոմիտեից Կարեն Օհանջանյանը եւ հասարակ այլ քաղաքացիներ:

Ի դեպ, Օհանջանյանի խոսքը թեեւ ընդհանուր առմամբ լավ էր՝ «Միջազգային հանրությունը պետք է Ճանաչի ԼՂՀ անկախությունը», «20 տարում նոր սերունդ է աճել Ղարաբաղում, որը չի էլ կարող Ադրբեջանի կազմում պարել», սակայն մի կետում քաղաքական մեծ սխալ է թույլ տալիս՝ ասելով, թե այնտեղ հրեաների, աղվանների եւ պարսիկների սերունդներն են պորում, եւ դժվար է խոսել հայերի մաքուր արյան մասին: Հասկանալի է, որ բացի հայերից, այլ ազգեր էլ են պարել Ղարաբաղում, բայց Հռոմի պապից ավելի կաթոլիկ երեւալու մարմաջը մեր շատ հասարակական-քաղաքական գործիչների ինքնամոռացության է մատնում: (Կարծես թե Եվրոպայում պորողների արյան մեջ միայն տեղացիների արյունն է): Եվ բնականաբար, նման «թանկարժեք» մտքերը օտար լսարանում այլ ազդեցություն են ունենում: Ինչպես, օրինակ, Դավիթ Շահնազարյանը կամ Հելսինկյան խմբից Մարտիրոսյանը Ղարաբաղի խնդրի լուծումը կապում են առավելապես երկրի ավտորիտար ռեժիմի կամ ժողովրդի վստահությունը չվայելող իշխանությունների հետ: Իհարկե, շատ լավ կլիներ, որ Հայաստանում եւ Ադրբեջանում եվրոպական դեմոկրատիա լիներ, բայց դա ոչ մի կապ չունի Ղարաբաղի խնդրի լուծման հետ: Կարելի է երեւակայել, որ եթե Ադրբեջանում դեմոկրատ ղեկավար հայտնվի, պետք է սիրով ասի. «Սիրելի հայեր, վերցրեք Ղարաբաղը հանուն մեր տարածաշրջանի ժողովրդավարության»: Դա լիակատար միֆ է: Հակառակը, խնդիրը պետք է դրվի այլ տեսանկյունից՝ «Որքան իշխանությունները վայելեն ժողովրդի վստահությունը, այնքան իրենց համար հեշտ կլինի լուծել Ղարաբաղի խնդիրը»: Ի դեպ, Ադրբեջանական մասում իրենց երկրում տիրող ավտորիտար վիճակից խոսում է միայն ընդդիմադիր, նախկին վարչապետ Իսա Ղամբարը: Եվ եթե ադրբեջանական ֆիլմում նույնիսկ գովում են իրենց իշխանություններին, որ նրանք ամեն ինչ անում են փախստականների համար, խոսում է պետական չինովնիկը՝ դիվանագետը, ապա Հայաստանի հասվածում ոչ մի պետական պաշտոնյա որեւէ տեսակետ չի արտահայտում: Սա կամ ֆիլմի հեղինակների, կամ էլ նրանց հայ ուղեկիցների բացթողումն է: Պետք է մեկընդմիշտ հիշել, անկախ տվյալ պահին բարիկադների որ կողմում ես կանգնած, նախ պետք է մտածես քո ազգի, պետության եւ ժողովրդի ապագայի մասին:

Դավիթ Շահնազարյանը տարածաշրջանի ապագան տեսնում է Եվրասիական դաշինքի անվտանգության համակարգում եւ կողմնակից է Ռուսաստանի դերի նվազեցմանը: Ի տարբերություն վերջինիս, նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը խոսում է բուն Ղարաբաղի խնդրի մասին՝ անդրադառնալով պատմությանը եւ կոչ անելով ադրբեջանցիներին Ղարաբաղի տարածքում ցույց տալ հայկական քրիստոնեական հուշարձաններից ավելի հին ադրբեջանական հուշարձաններ:

Համոզիչ էր նաեւ քաղաքագետ Ստեփան Գրիգորյանի մոտեցումը, ով նույնպես լինելով տարածաշրջանի եվրոինտեգրման կողմնակից, միեւնույն ժամանակ նշում է, որ քանի դեռ ոչ մի աշխատանք չի տարվում եւ, բացի նախագահական մակարդակից, ոչ մի տեսակի շփումներ չկան երկու երկրների միջեւ, բնականաբար անհնար է նաեւ առանց այդ հասարակությունների կարծիքների նախապատրաստման որեւէ խնդիր լուծել, առավել եւս՝ Ղարաբաղի հարցը: Այս հարցում երեւանցի երիտասարդ սոցիոլոգ Գայանեի տրամաբանված եւ փաստարկված խոսքը մի շարք քաղաքական գործիչների համար կարող է դաս հանդիսանալ: Գայանեն պարզորշ նշում է, որ քանի դեռ ադրբեջանական քարոզչական ապարատը երեխաներին սովորեցնում է հայերին ատել կամ սպանել, դժվար թե այդ հասարակությունը պատրաստ լինի հարցի լուծմանը: Եվ այս պայմաններում տարածքների վերադարձը ոչ թե կլուծի հարցը, այլ նոր պատերազմի առիթ կտա: Իսկ Ստեփանակերտից մի բժշկուհու միտքն ընդհանրապես կարող է բնաբան դառնալ ողջ եռագրության համար. «Աշխարհում չկա որեւէ երկիր, որն արյամբ ազատագրի իր հողը, հաղթի պատերազմում եւ հետո խնդրի, որ իրեն հանգիստ թողնեն»:

Ամփոփելով՝ ընդհանուր առմամբ, ֆիլմաշարը պետք է հաջողված համարել, սակայն ապագայի համար նշենք նաեւ, որ արտաքին աշխարհի համար նման նուրբ թեմայով մեկնաբանություն տալիս պետք է նախ եւ առաջ մտածել դրա ունեցած դրական կամ բացասական հետեւանքների մասին:

ՀԱԿՈԲ ԱՄԱՏՅԱՆ
Պրահա

Ոչխարաբուծության զարգացումը կամայացնի Հայաստանը

Հայաստանից վերջին մեկ-երկու ամսվա ընթացքում ոչխարների արտահանման կտրուկ ավելացման առնչությամբ առաջացած իրարանցումը վեր հանեց այս ոլորտի խնդիրներ, որոնք տասնամյակների պատմություն ունեն: Սակայն նախ անդրադառնանք, թե ի՞նչ տեղի ունեցավ դեկտեմբեր-հունվար ամիսներին:

Հայաստանից, պաշտոնական տվյալներով, վերոնշյալ երկու ամիսներին հարեւան Իրան, ինչպես նաեւ Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանվեցին մոտ 120 հազար (այլ աղբյուրներ նշում են նաեւ 140-150 հազարը) ոչխար եւ գառ: Ընդ որում, դրա որոշ՝ ոչ մեծ մասը նաեւ Վրաստանից Հայաստան ներմուծված եւ արտահանված ոչխարներն են: Սակայն հիմնականում արտահանվել են մեր երկրում բուծվող ոչխարները: Այս երեւույթը տարատեսակ արձագանքների արժանացավ: Եթե ոչխարի մսի գնի կտրուկ թանկացումից շարքային քաղաքացիների դժգոհությունը բնական էր եւ հասկանալի, ապա անհասկանալի են թվում պաշտոնյաների եւ գյուղացիական տնտեսությունները ներկայացնողների արձագանքները:

Գյուղատնտեսության նախարար Գեւասիմ Ալավերդյանի եւ նախարարության մյուս պաշտոնյաների մոտեցումներն անհասկանալի էին, քանի որ նրանց խոսքերից այդպես էլ չէր հասկացվում՝ ոչխարների արտահանման ծավալների ավելացումը դրակա՞ն երեւույթ են համարում, թե՞ բացասական, կո՞ղմ են դրան, թե՞ ոչ: Նրանք միայն փորձում են արդարանալ եւ ապացուցել, որ ոչ թե այսքան է արտահանվել, այլ այնքան: Անշուշտ, առանց նախարարի կամ նախարարության գիտության կամ մասնակցության նման աշխույժ գործընթաց դժվար թե տեղի ունենար: Հետեւաբար, նրանք կարող էին առնվազն հիմնավորել ոչխարների զանգվածային արտահանման պատճառները, այլ ոչ թե թվերը ճշտելով արդարանալ:

Մյուս կողմից, Ագրարագյուղացիական միության նախագահ Հրաչ Բերբերյանը, որը թվում է, թե գյուղնախարարից ավելի տեղյակ պետք է լիներ Հայաստանի գյուղատնտեսության եւ մասնավորապես անասնաբուծության խնդիրներին, գրեթե ողբերգություն էր համարում ոչխարների արտահանումը Հայաստանից, ասելով, որ արտահանվում է նաեւ մայրական կազմը: Եթե Հայաստանի գյուղատնտեսության շահերից հանդես եկող հասարակական կազմակերպության ղեկավարը չի հասկանում, թե ի՞նչ է նշանակում ոչխարաբուծություն զարգացնել Հայաստանում եւ դա ի՞նչ խնդիրներ կառաջացնի ամբողջ գյուղատնտեսության համար, ապա ի՞նչ ասել գյուղնախարարի մասին:

Այժմ՝ ըստ էության խնդրի մասին: Վիճակագրական տվյալները փաստում են, որ 1991-ին Հայաստանում եղել են մոտ 1,6 մլն մանր եղջերավորներ, այսինքն՝ ոչխարի գլխաքանակ: Անցյալ տարվա տվյալներով՝ այդ թիվը մոտ 540-550 հազար էր: Ինչպես արդեն նշեցինք, վերջին 2 ամիսներին արտահանվել է 120 կամ 140 հազար ոչխար: Փաստորեն, ներկայումս Հայաստանում ոչխարի գլխաքանակը 400 հազար սահմաններում է: Վերջին տարիներին անընդհատ փոփոխվող մեր գյուղնախարարները նշում էին, որ Հայաստանում ոչխարաբուծության զարգացման ինչ-որ ծրագիր է մշակվել, որը նպատակ ունի ավելացնել այս կենդանիների արտահանումը հարեւան իսլամական երկրներ, որտեղ ոչխարի միսը մեծ պահանջարկ ունի: Իսկ թե դա



ի՞նչ ազդեցություն կունենա մեր գյուղատնտեսության մյուս ճյուղերի վրա՝ գյուղնախարարությունում հավանաբար չեն մտածել: Ընդ որում, այդ կառույցի ներկայացուցիչները երբեւէ չեն հայտնել, թե այս ընթացքում քանի՞ արտասավայրեր են վերականգնվել, ինչը նախատեսված է այդ ծրագրով:

Եթե մտածելը որոշակի դժվարություն է գյուղնախարարության պաշտոնյաների համար, ապա գուցե նրանք որեւէ մասնագետի հետ խորհրդակցեին կամ անդրադառնային այս հարցի պատմությանը: Իսկ պատմությունը խոսում է այն մասին, որ տասնամյակներ շարունակ պայքար է գնացել Խորհրդային Հայաստանում ոչխարաբուծությունը զարգացնելու ցանկություն ունեցողների եւ դրան դեմ արտահայտվողների միջեւ:

Բանն այն է, որ Հայաստանում ոչխարաբուծություն զարգացնելը նշանակում է մեր արտասավայրերը վերածել անապատի: Ոչխարներն արածելիս խոտը պոկում են արմատով, եւ հետագայում այդ վայրում այլեւս խոտ չի աճում: Ի տարբերություն կովերի, որոնք խոտը կտրում են, այլ ոչ թե պոկում արմատից: Այսինքն՝ վերջին դեպքում արտասավայրերը վերականգնվում են, իսկ ոչխարների արտասավայրերն այլեւս ոչնչի համար պիտանի չեն լինում, եթե դրանց վերականգնման հատուկ միջոցառումներ չիրականացվեն: Եթե գյուղատնտեսության նախարարությունում դա չեն հասկանում, ապա պետք է պատմության դպրոցական գրքերից հիշեին, թե ինչպես եւ ինչու են նորանոր տարածքներ զավթում քոչվոր անասնապահները: Նրանց միլիոնավոր ոչխարների համար անհրաժեշտ էր լինում նոր արտասավայրեր, ինչն էլ դրդում էր այդ ցեղերին նվաճողական պատերազմներ մղել: Հիմա հարց տանք գյուղնախարար Գեւասիմ Ալավերդյանին՝ գոնե սրա մասին նա տեղյա՞կ է եւ ի՞նչ երկրներ պետք է նվաճենք մեր ոչխարներով Հայաստանի արտասավայրերը ամայացնելուց հետո:

70-ական թվականներին Խորհրդային Հայաստանի կառավարությունը որոշեց սահմանափակել ոչխարների գլխաքանակը, բայց այդ հարցին տվեց ազգային ենթատեքստ, քանի որ մեզ մոտ ոչխարաբուծությամբ զբաղվում են հիմնականում քրդերն ու եզդիները: Նաեւ հարեւան Ադրբեջանի միջամտությամբ այդ հարցը լուծվեց ի վնաս Հայաստանի, եւ ոչխարների գլխաքանակը սահմանափակելու որոշումը փաստորեն վերացվեց: Մինչդեռ, ակնհայտ է, որ ոչխարաբուծությունը Հայաստանում զարգացնելն ուղղակի հակացուցված է: Այն պարզապես կխեղդի տավարաբուծության զարգացումը, իսկ ամայացած լեռնային արտասավայրերը սողանքների, հեղեղների եւ այլ աղետների հիանալի միջավայր են ստեղծում:

Փոխարենը պետք է զարգացնել տավարաբուծությունը, եւ ի վերջո ինքաբավ դառնալ տավարի մսի ապահովվածությամբ, այլ ոչ թե սատկած գոմեշի միս ներկրել Հնդկաստանից: Ի դեպ, նկատվում է նաեւ Հայաստանից տավարի մսի արտահանման ավելացման միտում: Արտահանման ավելացումն ինքնին դրական երեւույթ է, բայց ոչ այս դեպքում: Հետեւաբար, եթե միայն գյուղնախարարությունում չեն կարող կամ չեն ցանկանում, ապա կառավարությունում պետք է լրջորեն վերլուծեն, թե ինչպե՞ս է պատահում, երբ տավարի մսի արտադրությամբ սեփական պահանջարկը բավարարել չկարողացող երկրում այն արտահանվում է:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:22 PM Page 1

Անգլիացի, իռլանդացի, թուրք եւ ամերիկացի փաստաբաններ քննարկել են հայերի ցեղասպանությունը

Բարոյականության, արդարության եւ ճշմարտության որոնումների առաքելության շրջանակներում «Սեյնթ Թոմաս համալսարանի իրավաբանական ֆակուլտետը» (Մինեապոլիս), «Ցեղասպանության եւ մարդու իրավունքների ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի» (Զորյան ինստիտուտի մասնաճյուղը) համագործակցությամբ, փետրվարի 5-ին Մինեապոլիսում կազմակերպել է միջազգային մի կոնֆերանս՝ քննարկելու «Հայերի ցեղասպանությունը ազգային եւ միջազգային օրենքների շրջանակներում» թեման: Կոնֆերանսում, որը հովանավորել են Գաֆեսճյան եւ Օհաննեսյան ընտանիքների հիմնադրամները, ելույթներ են ունեցել, ըստ այդ առթիվ խմբագրությանը ուղարկված մամուլի հաղորդագրության, «Սեյնթ Թոմաս համալսարանի» հրատարակած «Զոռնըլ ըվ լո ընդ փաբլիֆ պոլիսի» պարբերականի գլխավոր խմբագիր Զոն Սենդին, որ դեռի Լոս Անջելես կատարած թռիչքի ժամանակ առաջին անգամ կողքի նստած ուղեւորից է իմացել հայերի ցեղասպանության մասին եւ զարմացել, թե ինչո՞ւ որպես Առաջին համաշխարհայինի ամերիկյան պատմության մի մաս չի դասավանդվում դպրոցներում, իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսորներից՝ Ռոբերտ Դելահանտին, որ վերահաստատել է համալսարանի դիրքորոշումը՝ նշելով, որ «հայերի ցեղասպանությունը անառարկելի պատմական փաստ է», «Սեյնթ Զոն համալսարանի» պայմանագրային իրավունքի պրոֆ. Մարկ Մովսիսյանը խոսել է «Թանզիմատի» (բարենորոգումների շարժման) մասին, «Զորյան ինստիտուտի» ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի տնօրեն պրոֆ. Վահագն Տատրյանը անդրադարձել է դաշնակից պետությունների 1915 թվի մայիսի 24-ին ստորագրած պաշտոնական հաղորդագրության նշանակությանը, որն անձնական պատասխանատվության էր ենթարկում երկրի ղեկավարներին՝ մարդկության եւ քաղաքակրթության դեմ գործադրած իրենց ոճիրների համար, «Իռլանդիայի ազգային համալսարանի» մարդու իրավունքների կենտրոնի տնօրեն՝ պրոֆ. Ուիլյամ Շաբասը խոսել է ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառելիության մասին, Բրիտանիայի մարդու իրավունքների ադրոջավոր (կառավարական) փաստաբան Զեֆրի Ռոբերտսոնը պարզաբանել է, թե ինչպես Բրիտանիայի արտգործնախարարությունը ապատեղեկացրել է կառավարությանը՝ թաքցնելով ճշմարտությունը հայերի ցեղասպանության մասին: Մարդու իրավունքների մրցանակակիր դատախազ՝ թրքուհի Էրեն Քեսկինը Թուրքիայից հեռախոսով է մասնակցել կոնֆերանսին եւ խոսել այլախոհների նկատմամբ երկրում ծավալված հետապնդումների մասին, «Ուիլյամ Քաթլեր» բոստոնյան ընկերության գործընկերներից Մարկ Ֆլեմինգը անդրադարձել է ցեղասպանության դասավանդման խնդիրներին Մասաչուսեթսում, «Ուիլյամ եւ Մերի քոլեջի» կառավարման բաժնի վաստակաշատ պրոֆ. Ռոջեր Սմիթը շեշտադրել է ազատ խոսքի սահմանափակումների պարագայում առաջացած բացասական հետեւանքները, Քեմբրիջ համալսարանում քաղաքագիտության գծով դոկտորականի թեկնածու, թուրք գրող եւ հետազոտող Զիյա Մեռալը կոչ է արել Թուրքիային հրաժարվել ժխտողականությունից եւ ընդունել իրականությունը:

Հ. Ծ.

Մարկ Մովսիսյան

Մարկ Ֆլեմինգ



Ռոջեր Սմիթ

Ուիլյամ Շաբաս

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՉԺՀ առեւտրային բանկերին կարգադրված է ազատվել դոլարային ակտիվներից

Չինաստանի կառավարությունը արժութային ակտիվներ տնօրինող հիմնադրամներին կարգադրել է միջոցները դուրս բերել իրենց կարծիքով վտանգավոր դոլարային ակտիվներից: Այդ մասին հաղորդում է չինական Asia Times թերթը:

ՉԺՀ իշխանությունների կարծիքով, երկրի հիմնադրամները պետք է ներդրումները սահմանափակեն ԱՄՆ գանձապետական պարտատոմսերով (որոնք ապահովված են պետերաշխիքներով), ինչպես նաեւ հիպոթեկային գործակալությունների (մասնավորապես Freddie Mac-ի) արժեթղթերով:

Չինաստանի կոմկուսի կարգադրությունը վերաբերում էր պետության կողմից վերահսկվող առեւտրային բանկերին, ինչպես նաեւ Արժութային շուկաների պետական վարչությանը: Դրանց տնօրինմանը ենթակա արժութային ակտիվների ընդհանուր ծավալը գնահատվում է 3 տրիլիոն դոլար:

ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի մեջ կատարած ներդրումների գծով Չինաստանը համաշխարհային առաջատար է: Անցյալ տարվա կեսերին Չինաստանի հաշվեկշռում կար ավելի քան 800 միլիարդ դոլարի պարտատոմս:

Բացի դրանից, 2009-ին Չինաստանը 9,6 միլիարդ դոլար է ներդրել ամերիկյան ընկերությունների բաժնետոմսերի մեջ: Այսպես, China Investment Corporation պետական հիմնադրամը դարձել է Apple, Coca-Cola, Johnson&Johnson, Motorola ընկերությունների, ինչպես նաեւ Morgan Stanley, Bank of America եւ Citigroup բանկերի բաժնետոմսերի մինորիտար փաթեթների սեփականատերը:

Արեւմուտքը շնորհավորել է Յանուկովիչին

Կիեւը կընդունի ռուսաց լեզվի օրենք

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման շնորհավորել է Վիկտոր Յանուկովիչին Ուկրաինայի նախագահական ընտրություններում նրա հաղթանակի առթիվ: Այդ մասին հաղորդվում է Ռեգիոնների կուսակցության առաջնորդի անձնական կայքէջում:

Յանուկովիչի հետ հեռախոսազրույցի ժամանակ Օբաման բարձր է գնահատել Ուկրաինայում ժողովրդավարության զարգացման մակարդակը: Օբամայի խոսքերով, դրա հաստատումը 2010 թվականի նախագահական ընտրություններն են:

Յանուկովիչը ԱՄՆ նախագահին շնորհակալություն է հայտնել շնորհավորանքի համար եւ հույս է հայտնել, որ երկու երկրների հարաբերությունները «դինամիկորեն կզարգանան վստահության եւ փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա»:

Ավելի վաղ Յանուկովիչի հաղթանակը շնորհավորել էին Լեհաստանի, Ֆրանսիայի, Վրաստանի, Ռուսաստանի, Լատվիայի, Էստոնիայի նախագահները եւ Թուրքիայի վարչապետը:

«Ազգը» ժամանակին անդրադարձել է Ուկրաինայի նախագահական ընտրությունների երկրորդ փուլի հետ կապված իրադարձություններին եւ քվեարկության արդյունքներին: Վերջնական տվյալներով, երկրորդ փուլում Յանուկովիչը ստացել է քվեների 48,95 տոկոսը, վարչապետ Յուլյա Տիմոշենկոն՝ 45,47 տոկոսը: Հաղթողի անունը պաշտոնապես կհայտարարվի փետրվարի 17-ին: Նոր նախագահի պաշտոնակալության արարողությունը տեղի կունենա մարտին:

Ինչ վերաբերում է ընտրություններում հաղթանակած ընդդիմադիր Ռեգիոնների կուսակցության ներքաղաքական ծրագրերին, նախատեսվում է մինչեւ ամառ ընդունել օրինագիծ, որը հնարավոր կդարձնի ռուսերենով կրթություն ստանալը Ուկրաինայի դպրոցներում եւ բուհերում:

Ռեգիոնների կուսակցության փոխնախագահ Բորիս Կոլեսնիկովի խոսքերով, տեղական խորհուրդները իրավունք կունենան բավարարելու այն ծնողների խնդրանքները, որոնք ուզում են, որ իրենց զավակները կրթություն ստանան ռուսաց լեզվով: Հնարավոր կլինի ռուսերեն ուսումնասիրել բոլոր հիմնական առարկաները, սակայն դպրոցական ծրագրում ուկրաիներենի պարտադիր ուսուցումը կպահպանվի:

Կուսակցությունն առանձին օրենք է նախապատրաստում ռադիոյում եւ հեռուստատեսությունում ռուսաց լեզվի կիրառության վերաբերյալ: Բացի դրանից, տեղական խորհուրդներին իրավունք կընձեռվի դատակազմությունն իրականացնել երկու լեզվով՝ ռուսերեն եւ ուկրաիներեն:

Նախատեսվում է դպրոցներում ռուսաց լեզու մտցնելու վերաբերյալ օրենք ընդունել արդեն գարնանը, որպեսզի առաջիկա ուսումնական տարվա սկզբից բոլոր ցանկացողները կարողանան օգտվել այդ օրենքից:

Մ. ՆԱՀԱՆԳԵՐ

Մորգենթաուների պատմությունը հրեական թանգարանում

Բաների պարկ Սիթիի (Այլ ըվ Ուայթ, Վիրջինիա) Հրեական ժառանգության թանգարանում անցյալ տարվա վերջում բացված «Մորգենթաուները: Ծառայության մի ամբողջ ժառանգություն» ցուցահանդեսը բաց է մնալու մինչեւ այս տարվա դեկտեմբերը: Այդ առթիվ «Նյու Յորք թայմսում» Էնդրու Քեհի գրած հոդվածից (որն արտատպվել է «Ամինյն միրոր սփեֆթեյթր» շաբաթաթերթում) թարգմանաբար քաղում ենք հետեւյալ տեղեկությունները:

Ցուցահանդեսը քննում է 3 Մորգենթաուների՝ Ռոբերտի, որն այժմ 90 տարեկան է եւ անցյալ տարեվերջին միայն թողեց 1975 թվից զբաղեցրած Մանհեթենի շրջանային դատախազի իր պաշտոնը, նրա հոր՝ Հենրի կրտսերի (1891-1967), ով Ֆրանկլին Ռուզվելտի նախագահության ժամանակ գանձապետարանի նախարար էր, եւ նրա պապի՝ Հենրի ավագի (1856-1946), ով Առաջին աշխարհամարտի ժամանակ դեսպան էր Օսմանյան կայսրությունում, կյանքի պատմությունը: Ներկայացված են ինչպես նկարներ, առարկաներ, այնպես էլ պատմական փաստաթղթեր: Բացման արարողության ժամանակ Ռոբերտը խոստովանեց, որ իր պապից է սովորել ուրիշներին ծառայելու անհրաժեշտությունը: «Ես 55 տարեկանից եմ սկսել ծառայել հասարակությանը, բայց դուք այդքան երկար սպասելու կարիք չունեք», ասաց նա ներկաներին:

Երկրորդ համաշխարհայինի օրերին նա «Լենգդելլ» ականակիրի վրա է եղել, երբ թշնամին հարձակվել է նավի վրա եւ խորտակել: Միջերկրականի ջրերում մի կերպ փրկվելով՝ նա երդվել է ծառայել հասարակությանը: Նրա ռազմածովայինի գլխարկը, մեդալները եւ այլ իրերը ցուցադրված են թանգարանի դահլիճներում:

Հենրի Մորգենթաու ավագը հարավային Բավարիայում է ծնվել: Հրեա ընտանիքի 12 երեխաներից մեկն էր: Տեղափոխվել է Նյու Յորք 1866-ին: Դեսպան է նշանակվել 1913-ին: Նրա անվան հետ է կապված հայերի ցեղասպանությանը մեծ ուշադրություն դարձնելու փաստը: Ցուցադրված է 1915-ին նրա ուղղակած հեռագիրը պետքարտուղարությանը, որտեղ գրված է. «Ընթացքի մեջ է մի ամբողջ ազգ բնաջնջելու արշավը»:

Մորգենթաու եւ Ռուզվելտ ընտանիքները բարեկամացել են իրար հետ, երբ միաժամանակ ապրել են որպես հարեւաններ Նյու Յորքի «Դաչես Քաունթիում»: Ցուցադրված է Հենրի կրտսերի զեկուցագիրը հրեաների սպանության մասին, որի հիման վրա Ռուզվելտը ստորագրել է 9417 հրամանը՝ հիմնելու պատերազմի փախստականների վարչությանը, որն իր հերթին օգնել է փրկելու մոտավորապես 200 հազար եվրոպացի հրեաների կյանքը:

Թանգարանի ցուցանմուշների ընտրության եւ տեղադրման գործում մեծ ներդրում են ունեցել Մելիսա Մարտենսն ու Քարեն Ֆրանկլինը, որոնց Մորգենթաուները մեծապես աջակցել են:

Հ. Ծ.

Բիլ Քլինթոնին վիրահատել են

ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը փետրվարի 11-ին տեղափոխվել է Մանհեթենում գտնվող New York-Presbyterian Hospital կլինիկա, որտեղ ենթարկվել է սրտի վիրահատության: Քլինթոնի բժիշկ Ալլեն Շվարցը երեկ Նյու Յորքում կազմակերպված մամլո ասուլիսում հայտարարել է, որ վիրահատությունը հաջող է անցել: Շվարցը նաեւ ընդգծել է, որ ԱՄՆ 42-րդ նախագահը վիրահատությունից առաջ ունեցել է ոչ թե սրտի նոպա, այլ ցավեր սրտի շրջանում: Բժիշկը ենթադրություն է արել, որ 63-ամյա քաղաքական գործիչը կկարողանա աշխատանքը վերսկսել արդեն երկուշաբթի օրը՝ փետրվարի 15-ին:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ամուսնու վիրահատության պատճառով ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը որոշել է մեկ օրով հետաձգել Պարսից ծոցի երկրներում իր կատարելիք ուղեւորությունը: ԱՄՆ 42-րդ նախագահին աջակցություն են հայտնել եւ առողջություն մաղթել ներկայիս նախագահ Բարաք Օբաման եւ Բիլ Քլինթոնից հետո պաշտոնավարած Զորջ Բուշը: Ի դեպ, Բիլ Քլինթոնը եւ Զորջ Բուշը գլխավորում են երկրաշարժից ավերված Հաիթիի օգնության հիմնադրամը:

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:54 PM Page 1

ԱԶԳ **ԿԻՆՈ**

Ադաբաշյանի սցենարները նման են կտավների

Ծանաչված կինեմատոգրաֆիստ, սցենարիստ եւ նկարիչ Ալեքսանդր Ադաբաշյանն այս օրերին մոսկովյան հանրությանը ցուցադրում է իր նկարչական տաղանդի նոր դրսեւորումները՝ «Արտ-բաբ-մակ» պատկերասրահում բացված ցուցահանդեսում:

Իր սցենարներով նկարահանված բազմաթիվ ֆիլմերում նա հանդես է եկել նաեւ որպես բեմադրող նկարիչ, ինչպես օրինակ «Սեւ աչեր» ֆիլմում, որտեղ բնապատկերների փոխարեն օգտագործված են իր կտավները: «Մի քանի օր Օբլոմովի կյանքից» ֆիլմում սյուրռեալիստական Պետերբուրգը նույնպես նկարահանված է Ադաբաշյանի կտավների միջոցով: Նա ասում է, որ սցենար գրելու ժամանակ միշտ էսքիզներ է անում: «Իմ կարծիքով, սցենար գրելիս աչքիդ առաջ պատկերները պետք է երեւան որպես կտավներ, ինչպես դա անում են իսկական գրողները: Այդպես է ստեղծագործել Լեւ Տոլստոյը», ասում է Ադաբաշյանը: Թարգմանաբար ներկայացնում ենք իր արվեստի եւ կինոյի մասին նրա մտքերը՝ քաղված ռուսական մամուլից:

«Վասիլի Իվանովիչ Չապաեւի պես ես էլ համալսարան չեմ ավարտել: Իմ բոլոր մասնագիտությունները սկսել եմ ենթավարպետ դառնալով: Այդպես նաեւ կինոստուդիայի ասպարեզում: Երբեք ոչինչ չէի գրում: Մինչեւ հիմա չգիտեմ, թե ինչն էր Կոնչալովսկուն դրդել ինձ առաջարկել աշխատելու մի սցենարի վրա, որը պատվեր էր Միջին Ասիայից: Սկսեցի մաղմղել, իսկ նա առանց բարկանալու բացատրեց, որ գրածս բանի պետք չէ, իսկ ես պնդեցի, որ ամեն ինչ հրաշալի է: Անկեղծ ասած, ես նույնիսկ չգիտեմ, թե ի՞նչ եմ մտածում ինքս իմ մասին՝ որպես կինեմատոգրաֆիական օբյեկտի: Իսկապես չգիտեմ: Առհասարակ, կարծում եմ, որ ռեժիսուրան ոչ թե մասնագիտություն է, այլ բնավորության մի ամբողջ պաշար: Ես ինձ ռեժիսոր չեմ համարում: Ավելի ճիշտ, իրականում ռեժիսոր չեմ, այլ նկարիչ: Ռեժիսորական կրթություն երբեւէ չեմ ստացել:

Ընդունված է, որ ռեժիսորն ամենից առաջ պետք է լինի իսկական լիդեր, մարդ՝ լիապես համոզված, որ իր աշխարհայացքը միանգամայն ճշմարիտ է: Իր ամեն մի ֆիլմում նա պետք է ամբողջացնի ու վերջնակետին հասցնի այն թեման, որի մասին նկարում է: Եթե ֆիլմը սիրո մասին է, ուրեմն՝ վերջ, այլեւս ոչ ոք այդ թեմայով չպետք է նկարահանի: Թեման փակված է: Իսկական ռեժիսոր է համարվում նա, ով մասսայական տեսարանի համար կարող է հարյուր մարդու մտցնել սառցաջրի մեջ ու նրանց կես ժամ այնտեղ պահելուց հետո ասել.«Ոչ, ավելի լավ է ափում նկարահանել»:

Իսկ ես շատ հպարտ եմ, որ բեմադրող նկարիչ լինելու ընթացքում ոչ մի ծառ չեմ սղոցել: Շատ պարզ ու հասարակ ամեն անգամ առաջարկել եմ փոխել տեսախցիկի դիրքը: Ոչինչ չեմ կոտրել, ոչ մի բան չեմ փչացրել:

Իսկական ռեժիսոր է համարվում նա, ով չի խնայում ոչ իր, ոչ էլ ուրիշի առողջությունը: Այդպիսիների մասին հետո պատմում են, որովհետեւ նրանք շատերին են դուր գալիս: Նկարահանման հրապարակում բոլորը թափուն տրնջում են, իսկ հետո հիացմունքով հիշում.«Մյ, նա ռեժիսոր էր, ա՛յ, ես դա հասկանում եմ»:

Խոշոր պլանի համար դերասանին 14 ժամ պահում են սառնամանիքի տակ այն դեպքում, երբ նույն տեսարանը կարելի է նկարահանել հյուրանոցի բակում, բայց... դա է պահանջում ռեժիսուրան: Այդպիսի ռեժիսորի բնութագիր ունենալու հատկություններ ես բնավ չունեմ:

Ինձ համար ամենադժվարն ու հետաքրքրականը հանդիսատեսի զգացմունքները կառավարելն է: Բայց ոչ երբեք նրանց առեղծվածանկարներ լուծել առաջարկելով, այլ բացառապես նրանց մտքի մեջ թափանցելով եւ մտածելու տեղիք տալով: Այդ առումով ինձ չափազանց շատ է օգնել իմ առաջին մասնագիտությունը՝ կերպարվեստը: Օգնել է այն տեսանկյունից, որ կինոյի համար էսքիզները շատ հաճախ արվում են խիստ պրոֆեսիոնալ ոճով. օդում թռչում է տրակտորը, գյուղում խոտը կապույտ է, ծառը՝ նարնջագույն, իսկ ձին լողում է ոտքերը վեր տնկած: Ահա այդպիսի գյուղական պատկերներ: Իսկ թե ինչպե՞ս է պետք այդ ամենը նկարահանել, բոլորովին այլ խոսակցություն է: Ինքներդ գլխի ընկեք:

Երբ «պերեստրոյկան» սկսվեց, իմ կարծիքով, բոլոր

Ադաբաշյանի սցենարները նման են կտավների



ուժերը, որ մնացել էին երկրում, պետք էր ուղղել դեպի կրթության ոլորտ: Ամենից առաջ դպրոցական կրթության: Բոլոր համակարգիչների, մեքենաների առջեւ պետք էր նստեցնել պրոֆեսորներին եւ ակադեմիկոսներին՝ նրանց վճարելով ամենաբարձր աշխատավարձը, որպեսզի նրանք դասավանդեին դպրոցներում: Այդ պարագայում այժմ կունենայինք բոլորովին այլ սերունդ: Կարծում եմ, դա կլիներ ազգային այն գաղափարը, որին ամեն ոք հավանություն կտար: Նույն բանը կառաջարկեի անել կինոյում: Փոքր բյուջեով պսեւդոամերիկյան ֆիլմեր նկարահանելու փոխարեն մեր ամբողջ ուժն ու կարողությունը պետք էր տալ ՎԳԻԿ-ին, որպեսզի կինոյի վարպետներն իրենց վայել վարձավճարով դասավանդեին այդ ինստիտուտում, այլ ոչ թե սեփական գոյությունը պահելու համար նկարահանեին ինչ պատահի: Կինոինստիտուտը պետք է ստանար այն ժամանակվա ամբողջ կինոսարքավորումները: Այդ դեպքում, երեւի թե, կունենայինք ոչ թե մեկ, այլ երկու սերունդ, որոնք այսօր մեզ կգերազանցեին ճգնաժամային վիճակից դուրս գալու իրենց կարողություններով: Այնպես որ, հարցը ոչ թե գաղափարների սովն է, այլ համընդհանուր գաղափարի բացակայությունը:

Մեր կինոյում հիմա երկարաձիգ ճգնաժամ է՝ առաջացած համաեվրոպական կինոճգնաժամի հոսքից: Կարծես նոր-նոր սկսեցին հասկանալ, որ կինոն նախեւառաջ արտադրություն է: Առհասարակ կինոն ամբողջապես արվեստի տեսակ չէ, որովհետեւ եթե կինոն համեմատենք գրականության, գեղանկարչության, թատրոնի, բալետի եւ երաժշտության հետ, կնկատենք, որ դրանցում մարդու ինքնարտահայտման բացառիկ դրսեւորումները պահանջում են նվազագույն միջոցներ: Երգիչը կարող է բղավել ամբողջ կոկորդով, բանաստեղծը՝ գրել իր մտքում, նկարիչը՝ քարանձավների պատերին նկարել: Իսկ եթե կինոյից հանենք երկու առարկա՝ ժապավենը եւ կինոխցիկը, ապա այն պարզապես կդադարի գոյություն ունենալուց: Հենց այդ պատճառով կինոն կապված է տեխնիկական առաջընթացի հետ: Հիմա էլեկտրոնային կրիչներն ավելի կատարյալ են ժապավենից, իսկ դա նշանակում է, որ նախապատվությունը առաջինին է տվելու: Վիրտուալ բոլոր հնարավորությունները կփոխարինեն նկարահանումների ավանդական ձեւին, տաղավարներին, կոստյումներին, սոսնձված մոռուքներին: Ի վերջո, 15 տարի անց, ամեն մեկն իր տան համակարգիչով իր համար ֆիլմ կհորինի, որում հանդես կգան Մերիլին Մոնրոն, Յուրի Նիկուլինը, Չարլի Չապլինը: Մի խոսքով, ով ինչպես հարմար կգտնի, ում խելքին ինչ կփչի, կմնա միայն մեկ անհրաժեշտություն՝ հորինել պատմություններ»:

Պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Սերժ Թանգյանի «Ընտիր մահացածներին» սիմֆոնիայի տեսագրության ցուցադրումը

Սերժ Թանգյանը, «Ռեպրեսիվ ձայնագրություններ» ստուդիան եւ «Սինեմա պուրգատորիա» թատերական դիստրիբուտորական ընկերությունը միավորվելով որոշել են ամբողջ երկրով մեկ ցուցադրել Թանգյանի «Ընտիր մահացածներին» հեղինակային գործի նոր սիմֆոնիկ մեկնաբանության տեսաժապավենը, որն արդեն արժանացել է ֆննադատների գովասանքներին: Փետրվարի 19-ից սկսած ցուցադրումներ են տեղի ունենալու Պորտլենդում, Ինդիանապոլիսում, Բլումինգտոնում, Նյու Կոնկորդում, Պրովիդենսում, Սեաթլում, Սան Անտոնիոյում, Նյու Յորքում, Սոմերվիլում, Սոլթ Լեյք Սիթիում, Չիկագոյում, Նյու Հեյվընում: CD/DVD-ի պատճառնական շնորհանդեսը տեղի կունենա մարտի 9-ին:

Սիմֆոնիայի ձայնագրությունը հիմնվել է Օքլենդի ֆիլհարմոնիայի նվագախմբի կատարման վրա՝ Նոր Զելանդիայում: «Լոս Անջելես թայմսը», «Ռոլինգ սթոունզ» խումբը եւ այլ պարբերականներ եւ երաժշտական խմբագրություններ արդեն իսկ արձագանքել ու բարձր գնահատական են տվել տեսագրությանը:

Հ. Ծ.

ՖԻԼՄԱՇԽԱՐՀ

Նոր ֆիլմ Հրանտ Մաթեւոսյանի մասին



«ՀայԱրտ» մշակութային կենտրոնում երեկ կայացավ «Խոսիր ինձ հետ» փաստավավերագրական ֆիլմի պրեմիերան: Ֆիլմը նվիրված է գրող, արձակագիր Հրանտ Մաթեւոսյանին, որի ծննդյան 75-ամյակը լրացավ երեկ:

Ֆիլմի ռեժիսորն ու սցենարի հեղինակը «ՀայԱրտ» կենտրոնի տնօրեն Ռիտա Շառոյանն է: «Ֆիլմը ստեղծվել է 4 տարի առաջ, Մ.Նահանգներում: Հրանտ Մաթեւոսյանի հետ բազմաթիվ հարցազրույցներ եմ ունեցել, եւ, փաստորեն, այս ֆիլմը ստեղծել եմ սեփական արխիվի տեսանյութերով: Ամբողջ սցենարը գրողի եւ ընթերցողի երկխոսություն է: Տվյալ դեպքում, ես առաջին հերթին ընթերցող եմ ու հետո միայն ռեժիսոր», ասաց է Ռիտա Շառոյանը: Ֆիլմի տեւողությունը 25 րոպե է, որի ընթացքում գրողն իր զրուցակցի հետ խոսում է կյանքի փիլիսոփայության եւ բազում այլ հարցերի մասին:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԻՆՈ

Ջոաննա Սֆար. «Սիրակեզ ֆիլմ Գենսբուրգի մասին»

Պատկերապատումների (կոմիքսների) հեղինակ Ջոաննա Սֆարը, զբաղմունքը փոխելով, ֆիլմ է նկարահանել ֆրանսիական երգարվեստի հայտնի ներկայացուցիչ Սերժ Գենսբուրգի մասին: Ֆրանսիայի կինոթատրոններում այս շաբաթ էկրան բարձրացած ֆիլմը, «Ֆիգարո» թերթի բնորոշմամբ, երաժշտական հեքիաթ է, որը նույնքան բանաստեղծական է, որքան քայքայիչ: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք թերթի հարցազրույցը Ջոաննա Սֆարի հետ:

- Ինչո՞ւ եք ասում, որ Ձեր «Գենսբուրգը» (հերոսական կյանք) ավելի շուտ հեքիաթ է, քան ֆիլմ:

- Հենց սկզբից Գենսբուրգների ընտանիքը ընտրեց այս նախագիծը, քանի որ նա չէր բացահայտում իրենց գաղտնիքները: Սա ոչ թե Գենսբուրգի երազած կյանքն է, այլ շատ վավերական է: Բայց ես ձգտել եմ հիմք ընդունել Սերժի ձայնը, պահպանել իր կյանքի մասին նրա պատմածները, ինչպես «Ռատատուի» մեջ: Դա ինձ շատ դուր եկավ, եւ ես նկարահանեցի սիրակեզ ֆիլմ Գենսբուրգի մասին:

- Իսկ կանայք...

- Նրանք երգչի ճանապարհին հայտնվում են ինչպես տեսիլքներ, որոնք կարող են խլել նրա ուժը կամ ուժ տալ, երբեմն՝ երկուսը մեկտեղ: Ամերիկյան կինոյում հերոսը դաս է առնում իր սխալներից, եւ նրա զույգի վիճակը բարելավվում է ֆիլմի վերջում: Այստեղ հակառակն է: Ֆրանսիացի հերոսը ոչինչ չի հասկանում եւ սկզբից մինչեւ վերջ մնում է նույնը: Նրան պատահող միակ բանը ժամանակի նշաններն են, որոնք մատնանշում են մոտալուտ վախճանը:

- Ինչպիսի կերպափոխություններ է ենթարկվել էրիկ Էլմոսինոն, որպեսզի դառնա Սերժ Գենսբուրգ:

- Սկզբում Շառլոտ Գենսբուրգի (երգչի դստեր) փուլն էր: Վեց ամիս ես Շառլոտի հետ աշխատեցի՝ նրան Սերժի փոխակերպելու գաղափարի վրա:

նույնիսկ եթե երբեմն շատ ստեր է ասել: Իմ նպատակը եղել է ազատվել Սերժի մեծավորների վկայություններից եւ պահպանել միայն նրա ձայնը: Օրինակ, նա պատմում է, որ ինքն ուզեցել է առաջինն ունենալ դեղին ասող: Իսկ երբ իրեն հարցրել են, թե ինչո՞ւ է այդքան շատախոս ասող կրել, ինքը պատասխանել է. «Դա ձեր ասողն է, պարոն: Դուք եք ուզում, որ ես այն կրեմ»:

- Որպես Գենսբուրգի երկրպագու ի՞նչ նպատակ եք ունեցել:

- Իմ նպատակն էր ստեղծել Գենսբուրգի գրեթե էկզիստենցիալիստական դիմանկար, որտեղ կմիախառնվեին նրա գաղափարները, մտերմիկությունն ու թուլությունները: Այդ «հերոսական կյանքը» զուրկ չէ հեգնանքից: Քանզի Գենսբուրգը իր շրջապատի համար ստեղծեց յուրօրինակ սրբի կերպար, մինչդեռ ինքը հեռու էր երանելի լինելուց: Վերջին հաշվով, պարզունակ կրոնասիրության պես մի բան կար Սերժ Գենսբուրգի պատմության մեջ: Ֆիլմի բախտը բերել է նաեւ նրանով, որ օգտվել է Universal կինոստուդիայի ամերիկյան կապիտալներից: Նրանք ինձ խնդրեցին հնարավորինս շատ պահպանել ֆրանսիական ոգին՝ ցուցադրելով Սենի ափերի սիրահարներին, նկարիչներին ու բնորդներին կամ ձեղնահարկի որեւէ սենյակ, Ի վերջո դա չհաջողվեց, եւ ավելի լավ: Կամաց-կամաց դա դնում էր վերագտնված, վերստեղծված, թատերականացված Գենսբուրգի հիմքերը:**

- Ինչո՞ւ դա չարվեց:

- Որովհետեւ չափազանց ցավատանջ էր Շառլոտի համար: Նա կարծում էր, թե այդ դերի շնորհիվ կհաղթահարի յուրօրինակ սուգը, որից այդպես էլ չէր կարողացել դուրս գալ: Բայց որքան շատ էինք աշխատում, այնքան նրա ձեռքերի դողն ուժեղանում էր, եւ նա չէր կարողանում դաշնամուր նվագել: Ի վերջո, ինձ ասաց. «Դու հրաշալի ֆիլմ կնկարահանես հորս մասին, բայց՝ առանց ինձ»: Ինչ վերաբերում է էրիկ Էլմոսինոյին, զարմանալին այն է, որ նա կյանքում բնավ նման չէ Սերժ Գենսբուրգին: Սակայն նրան փոխակերպելու համար դիմահարդարման մեծ ջանքեր չպահանջվեցին: Հինգ ամսվա ընթացքում էրիկը մշակեց իր շարժուձեւը, յուրացրեց Գենսբուրգի ձայնի ռիթմը, նախադասությունները մասնատելու ոճը: Եվ կերպարանափոխությունը տեղի ունեցավ:

- Ֆիլմում Դուք ինչո՞ւ եք հայտնվում Ժորժ Բրասանսի կերպարանքով:

- Ես նկարահանել եմ ֆիլմ Գենսբուրգի մասին, բայց իմ նախընտրած երգիչը Բրասանսն է:

Պատրաստեց
Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:23 PM Page 1

Մեկնարկում են ձմեռային օլիմպիական խաղերը

Այսօր վաղ առավոտյան, Երեւանի ժամանակով 6-ին Վանկուվերում կսկսվի ձմեռային 21-րդ օլիմպիական խաղերի բացման հանդիսավոր արարողությունը: Օլիմպիական խաղերի մասնակից երկրների պատվիրակությունները դուրս կգան շքերթի, որից հետո կբոցավառվի օլիմպիական ջահը:

Հիշեցնենք, որ Հայաստանի մարզական պատվիրակության կազմում ընդգրկված են չորս մարզիկներ, որոնք կմասնակցեն օլիմպիադային: Վանկուվերում մեր խառյակից առաջինը մրցասպարեզ դուրս կգա դահուկորդ Սերգեյ Միխայելյանը: Ամբոցքի մարզիկը փետրվարի 15-ին կմասնակցի 15 կմ դահուկավազքին: Երկու օր անց նույն մրցաձեւում մեկնարկի դուրս կգա գյումրեցի Քրիստինե Խաչատրյանը: Մեր մյուս մարզիկները կմասնակցեն երկուական մրցման: Փետրվարի 21-ին հսկա ոլորավայրէջքի մրցումներին կմասնակցի ծաղկաձորցի Արսեն Ներսիսյանը: Փետրվարի 27-ին նա հանդես կգա հսկա ոլորավայրէջքում: Ի դեմ, Արսեն Ներսիսյանը Հայաստանի մարզական պատվիրակության դրոշակակիրն է: Ամերիկահայ Անի-Մաթիլդա Սերեբրակյանն էլ մեկնարկի դուրս կգա փետրվարի 24-ին եւ 26-ին՝ հսկա ոլորավայրէջքում եւ ոլորավայրէջքում: Իհարկե, մեր մարզիկներից առանձնակի ակնկալիքներ չկան: Իրենք եւս խոստովանում են, որ մեծ հաջողություն կլինի, եթե կարողանան տեղ զբաղեցնել 50 լավագույններ ցանկում:

Օլիմպիական խաղերի մասնակիցները մեդալները կխաղարկեն 15 մարզաձեւում՝ բիաթլոն, բոբսլեյ, լեռնադահուկային սպորտ, երկամարտ, կեռլինգ, չմշկավազք, դահուկավազք, ոսկնակացատկ, սահնակային սպորտ, սնոուբորդ, սկելետոն, գեղասահք, հոկեյ, ֆրիսթայլ, շորթ-տրեկ: Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հոկեյի, գեղասահքի, լեռնադահուկային սպորտի եւ բիաթլոնի մրցումները: Ինչպես հայտնի է, Կանադան հոկեյի հայրենիքն է համարվում, որտեղ շատ են սիրում այդ մարզաձեւը: Այստեղ մեծ անհամբերությամբ են սպասում Ռուսաստանի եւ Կանադայի հավաքականների մրցավեճին: Հենց այդ հավաքականներին են մարգարեները համարում օլիմպիական ոսկե մեդալների գլխավոր հավակնորդներ:

Շահինյանն ու Քարամյանը միանձնյա առաջատարներն են

Շախմատի «Աերոֆլոտի» մրցաշարին մասնակցող հայ շախմատիստներից առավել հաջող են հանդես գալիս «C» խմբում ելույթ ունեցող Դավիթ Շահինյանն ու Լեւոն Քարամյանը: 4 տուրից հետո երկուսն էլ հարյուր տոկոսանոց արդյունքի են հասել: Մրցումների հերթական օրը «C» խմբի մասնակիցները 2 տուր անցկացրին: Դավիթը հաջորդաբար հաղթեց Յուրի Պետուխովին եւ ռուսաստանցի Էդուարդ Բարամյանին, իսկ Լեւոնը պարտության մատնեց Մայքլ Ջեոյին եւ Միխայիլ Կուզնեցովին: Մեր շախմատիստները 4 տուրից հետո նույնքան միավորով գլխավորում են աղյուսակը: 5-րդ տուրում նրանք կմրցեն միմյանց հետ:

3,5-ական միավորով առաջատարներին հետաքնդում են Էդուարդ Խաչատուրը, Գեորգ Ջարդարեֆերը եւ Պաուլ Յանսենն: 3 միավոր ունի Մարկ Բասենջյանը, որը մեկնարկում պարտվելուց հետո 3 անընդմեջ հաղթանակ է տոնել: 2,5-ական միավոր են վաստակել Աշոտ Ավետիսյանն ու Հենրիխ Փաշայանը, 2-ական՝ Հայկ Գալստյանն ու Տիգրան Հարությունյանը:

Ուժեղագույնների մրցաշարում հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Արման Փաշիկյանն ու Հրանտ Մելքումյանը, որոնք 3 հնարավորից 2 միավոր են վաստակել: Երկուսն էլ պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի համապատասխանաբար Սերգեյ Գրիգորյանցի եւ Եվգենի Բարեեւի հետ: Հաշտություն կնքեց նաեւ Գաբրիել Սարգսյանը Անտոն Շոմոեւի հետ մրցավեճում: Գաբրիելն առայժմ բոլոր պարտիաներն ավարտել է ոչ-ոքի: Իսկ ահա Զավեն Անդրեասյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Յան Նեպոմնյաչնուն: Զավենն ունի մեկ միավոր:

Ուժեղագույնների մրցաշարի առաջատարը վիետնամցի Լե Քուանգն է, որը հաղթեց նախորդ տուրում իր հետ աղյուսակը գլխավորող Բու Քսյանջիին:

A2 մրցաշարում 3 տուրից հետո 2-ական միավոր ունեն Տիգրան Քոթանջյանն ու Դավիթ Պետրոսյանը: Տիգրանը հաղթեց Ալեքսեյ Կիսլինսկուն, իսկ Դավիթը հաշտություն կնքեց Դունգ Նգուենի հետ: Աղյուսակը 2,5-ական միավորով գլխավորում են 9 շախմատիստներ:

«B» խմբի մրցաշարում Տիգրան Սիմոնյանը 4 հնարավորից 3 միավոր է վաստակել: Նա հաշտություն կնքեց Մաֆսիմ Պավլովի հետ: Անհաջող է խաղում Դավիթ Գեւորգյանը: Նա 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ զիջելով Միխայիլ Նեդոչեսովին: Դավիթը վաստակել է կես միավոր: 3,5-ական միավորով առաջատարներն են Ջիա Հաոխյանգը, Միխայիլ Գլոտովը, Արկադի Շեւելեւն ու Ալեքսանդր Ֆիլիպենկոն:

Բանակցությունները փակուղի են մտել

WBC-ի վարկածով գերծանրաքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոյի եւ Նիկոլայ Վալուեւի բանակցությունները փակուղի են մտել: Կլիչկոն մենամարտի անցկացման համար Վալուեւին 1 մլն դոլար պարգեւավճար է առաջարկել, մինչդեռ վերջինիս պրոմոութեր Դոն Քինգը պահանջել է չորս անգամ ավելին:

Իհարկե, եթե Նիկոլայ Վալուեւը չեմպիոնական գոտու տեր լիներ, գուցե կարողանար պահանջած գումարը ստանալ: Սակայն նա աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար պայքարում պարտվել էր Դեւիդ Հեյին ու կորցրել գոտին: Այնպես որ Վալուեւն ինքը պետք է շահագրգռված լինի մենամարտել Կլիչկոյի հետ ու հաջողության դեպքում այլ վարկածով աշխարհի չեմպիոն հռչակվել:

Բնականաբար, Կլիչկոն չի համաձայնել Քինգի պահանջին, ուստի պայմանագիրը չի ստորագրել: Այժմ աշխարհի չեմպիոնն իր տիտղոսի պաշտպանությունն իրականացնելու համար նոր մրցակից է փնտրում: Նախատեսվում է մենամարտն անցկացնել մայիսի 29-ին Հելզենկիրխենի «Շալկե-04» մարզադաշտում: Հավակնորդների թվում են Ալեքսանդր Պովետկինը, ինչպես նաեւ Դեւիդ Հեյի եւ Ջոն Ռուիսի մենամարտի հաղթողը: Այդ մենամարտը կայանալու է Մանչեսթրում, ապրիլի 3-ին:

Թեեւ բրիտանացի Դեւիդ Հեյը դեռեւս Կլիչկոյից պաշտոնական հրավեր չի ստացել, սակայն արդեն բարձրագոչ հայտարարություն է արել. «Առաջիկա երկու տարիներն ինձ համար բոնցֆամարտում հագեցած ու վառ կլինեն: Այդ ժամանակը բավարար կլինի չեմպիոնական բոլոր տիտղոսները միավորելու համար: Դրա իրականացման համար անհրաժեշտ է մենամարտել Կլիչկո եղբայրների հետ: Իհարկե, Կլիչկոների պես կարող էի հետաքրքրությամբ պահպանել տիտղոսս՝ մրցելով թույլ մրցակիցների հետ: Բայց դա ինձ համար չէ: Պատրաստ եմ բարձր գումարների դիմաց մենամարտել չեմպիոնների հետ: Սակայն Կլիչկոներն աղքատիկ հոնորար են առաջարկում: Չգիտես ինչու, նրանք բարկացած են իմ վրա: Սակայն նրանց հարկ կլինի ռինգ դուրս գալ ու մենամարտել ինձ հետ»:

Նանկինը կհյուրընկալի պատանի օլիմպիականներին

Ինչպես հայտնի է, այս տարվա օգոստոսի 14-26-ը Սինգապուրում անցկացվելու են առաջին պատանեկան օլիմպիական խաղերը, որոնց կմասնակցեն 14-18 տարեկան մարզիկները: Իսկ ահա 2014-ի ամառային պատանեկան օլիմպիադան կկայանա չինական Նանկին քաղաքում, որը ՄՕԿ-ի ներկայացուցիչների քվեարկության արդյունքում հաղթեց Պոզնանին: Իսկ առաջին ձմեռային պատանեկան օլիմպիադան տեղի կունենա 2012-ին ավստրիական Ինսբրուկում:

ՖՈՒՏԲՈԼ

«Փյունիկն» ու «Միկան» պարտվեցին

Կիպրոսում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող «Փյունիկն» ու «Միկան» ստուգողական առաջին հանդիպումներն անցկացրին: «Փյունիկը» ուժերը չափեց Մինսկի «Դինամոյի» հետ: Հայաստանի չեմպիոնը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ ու պարտվեց 0-3 հաշվով:

Այդ խաղում «Փյունիկը» խաղադաշտ է մտել հետեւյալ կազմով. Էդվարդ Հովհաննիսյան, Սարգիս Հովսեփյան, Արթուր Յուզբաշյան, Վահագն Մինասյան, Արսակ Եդիգարյան, Էդգար Մալաֆյան, Գեւորգ Ղազարյան, Կառլեն Մկրտչյան, Դավիթ Մանոյան, Մարկոս, Ալբերտ Թադեւոսյան: Փոխարինման են դուրս եկել Արամ Հովսեփյանը, Արգին Նազարյանն ու Վարազդատ Հարությունը:

Հաջորդ խաղը փյունիկցիները կանցկացնեն փետրվարի 15-ին՝ մրցելով սերբական թիմերից մեկի հետ:

Պարտություն կրեց նաեւ «Միկան», որի մրցակիցը Կիպրոսի Նիսու քաղաքի ՄԵԱՊ թիմն էր: Առաջինը հաջողության հասան դաշտի տերերը՝ մոտ 30 մետրից գրավելով «Միկայի» դարպասապահ Կլեւինսկասի դարպասը: Իսկ մինչ այդ «Միկայի» ֆուտբոլիստներ Մոնտենեգրոն, Դեմելը, Էդիլսոնը, Էդնեյը կարող էին գրավել մրցակցի դարպասը: Միայն առաջին խաղակեսի վերջին Ալեքսին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո դաշտի տերերին հաջողվեց խփել հաղթական գնդակը ու խաղը շահել 2-1 հաշվով:

ՄԵԱՊ-ը հանդես է գալիս Կիպրոսի առաջնության առաջին խմբում եւ ընթանում է 7-րդ տեղում:

Նշենք, որ 2-րդ խաղակեսում խաղադաշտ դուրս եկավ լիտվացի 28-ամյա հարձակվող Մինդաուգաս Գրիգալեւիչյուսը, որն անցյալ տարի հանդես էր գալիս «Վեստայում»: Խաղին ներկա է գտնվել Վրաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Թիմուր Կեցբայան՝ հետեւելու «Միկայի» դարպասապահ Սոսո Գրիշիկաշվիլու ելույթին: 37-ամյա փորձառու դարպասապահը Վրաստանի ազգային հավաքականի թեկնածու է:

Ստուգողական առաջին խաղում «Միկայի» կազմն այսպիսին էր. Սաուլիուս Կլեւինսկաս (Սոսո Գրիշիկաշվիլի, 46), Ալեֆս, Հրայր Մկոյան, Ալեքսանդր Թադեւոսյան, Հրաչյա Միխայելյան (Գեւորգ Պողոսյան, 50), Աղվան Մկրտչյան, Պեդրո Լոպես (Նարեկ Բեգլարյան, 55), Ուլիսես Մոնտենեգրո, Էդնեյ (Միխայել Պողոսյան, 75), Ժունիոր Էդիլսոն, Բոտի Դեմել (Մինդաուգաս Գրիգալեւիչյուս, 63):

Հաջորդ խաղը «Միկան» կանցկացնի փետրվարի 15-ին՝ մրցելով Կիեւի «Դինամոյի» երիտասարդական կազմի հետ:

Պատանի շախմատիստի հաջողությունը

Բելգիայի Մեխելեն քաղաքում անցկացված շախմատի Ֆլանդրիայի առաջնությունում հաջող հանդես եկավ ութամյա Գեւորգ Մինասյանը: Նա վերջերս դարձել էր Անտվերպենի մարզային առաջնության հաղթող:

Ամենակրտսեր տարիքային խմբում մրցաշարին մասնակցում էին 21 շախմատիստներ: Գեւորգը հիանալի սկսեց մրցաշարը՝ տոնելով 5 անընդմեջ հաղթանակ: 6-րդ տուրում էլ նա մրցակցի նկատմամբ զգալի առավելություն ուներ, սակայն փորձի պակասն ու հոգնածությունը թույլ չտվեցին այդ պարտիայում էլ հաղթել: Գրանցվեց ոչ-ոքի: Իսկ ավարտական՝ 7-րդ տուրում Գեւորգը պարտվեց, ինչն էլ զրկեց հայ շախմատիստին չեմպիոնի տիտղոսից: Ութամյա պատանին բավարարվեց 2-րդ տեղով: Սակայն դա էլ մեծ հաջողություն է Գեւորգի համար:

Ապրիլին կայանալու է Բելգիայի շախմատի առաջնությունը, որին լրջորեն է նախապատրաստվում Գեւորգը: Հուսանք, որ այդ մրցաշարում էլ հաջողությունը կուղեկցի հայ շախմատիստին:

Արոնյանը կմասնակցի Լինարեսի մրցաշարին

Փետրվարի 13-ին իսպական Լինարես քաղաքում կմեկնարկի շախմատի ավանդական գերմրցաշարը: Վերջին տարիներին մրցաշարին մասնակցում էին 8 ուժեղագույն շախմատիստները: Այս անգամ մրցաշարում հանդես կգան վեց գրոսմայստերներ, որոնք երկու շրջանով անցկացվելիք մրցումներում կորոշեն հաղթողին:

Մրցաշարի մասնակիցների թվում է Լեւոն Արոնյանը (2781), որն իր վարկանիշով զիջում է միայն բուլղարացի Վեսելին Թոփալովին (2805): Մրցակիցների թվում են նաեւ Իսրայելը ներկայացնող Բորիս Գելֆանդը (2761), ադրբեջանցի Վուգար Հաշիմովը (2759), ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը (2736) եւ իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոն (2705):

Լեւոն Արոնյանը Լինարեսի մրցաշարին մասնակցում է 2006-ից: Նրա նորամուտն ուժեղագույնների մրցաշարում փայլուն ստացվեց: Վեսելին Թոփալովի, Թեյմուր Ռաջաբովի, Պետեր Լեկոյի, Վասիլի Իվանչուկի, Պյոտր Սվիդլերի, Էթիեն Բաֆրոյի եւ Ֆրանսիսկո Վալյեխոյի հետ մրցավեճում Լեւոնը 14 հնարավորից վաստակեց 8,5 միավոր եւ գրավեց առաջին տեղը: Արոնյանը կես միավորով առաջ անցավ Թոփալովից եւ Ռաջաբովից:

2007-ին Արոնյանը 7 միավորով 4-րդ տեղում էր՝ իրենից առաջ թողնելով Վիշվանաթան Անանդին (8,5), Ալեքսանդր Մորոզեւիչին (7,5) եւ Մագնուս Կառլսենին (7,5): Հաջորդ տարի նա արդեն եզրափակեց մրցանակային եռյակը՝ վաստակելով 7,5 միավոր: Առջեւում էին Անանդը (8,5) եւ Կառլսենը (8): Անցած տարվա մրցաշարն ամենաանհաջողն էր Արոնյանի համար: Նա 6,5 միավորով գրավեց նախավերջին՝ 7-րդ տեղը: Իսկ հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը, որը Վասիլի Իվանչուկի հետ վաստակել էր 8 միավոր, սակայն վերջինիս գերազանցեց լրացուցիչ գործակիցներով:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 2/12/2010 9:46 PM Page 1

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Ճանապարհ դեպի Օսլո

Օսլոյում կայանալիք «Եվրոտեսիլ» մրցույթ-փառատոնին Հայաստանը ներկայացնող երգիչների մրցապայքարը նմանվեց խաղախական ընտրության՝ միայն այն տարբերությամբ որ խվեթերթիկներ չկային, թե չէ հասատ կլիներ նաեւ լցոնում: Ներկայացված 10 թեկնածուներից հիմնական պայքարը երեքի՝ Ռազմիկ Ամյանի, Էմիի եւ Եվա Ռիվասի միջեւ է, եւ ամենայն հավանականությամբ հենց այս եռյակից մեկն էլ կմեկնի Օսլո: Երգչուհի Էմիին «Եվրոտեսիլի» ճանապարհին էր վաղուց, բայց հենց այս տարի շրջանառվեցին նրա հավանական մասնակցության լուրերը: Ողջ տարվա ընթացքում հայ երգիչները տեղի-անտեղի տալիս էին նրա ու Միհրանի անունը՝ որպես հիմնական թեկնածուների, հետո էլ կարծես իրենց ուղղելով ասում. «Դե կարծում ենք, որ հենց նրանք կգան, նրանք արժանի են»:

Ռազմիկ Ամյանն էլ «Եվրոտեսիլ» ուղեւորվել էր երկու տարի առաջ, բայց որպես բեք-վոկալ, ու նրա մասնակցությունը նույնպես կանխատեսելի էր: Հանրությանն անհայտ Եվա Ռիվասին հայտնի կատարողների հետ մրցակցությունը չվախեցրեց: Երգչուհու անունը երկու շաբաթում դարձավ հայտնի:

Մինչ Օսլո ուղեւորվելը մեր ասողները հասցրեցին միմյանց հասցեին լավ ցեխ շպրտել: Եթե Ամյանն իրեն փորձեց պահել ջենտլմենին վայել, ապա աղջիկները, ավելի ճիշտ՝ նրանց «ֆանատները», ամենայն հավանականությամբ երգչուհիների պրոդյուսերների միջամտությամբ, նախ սոցիալական կայքերում, հետո մամուլով սկսեցին միմյանց վիրավորել, հիշել հովանավորներին, ով ինչ ձայնային դիապազոն ունի, ով ում բարեկամն է ու ինչի է ընդունակ:

Բայց ֆանի որ աղջիկներից որեւէ մեկը չկարողացավ մյուսին վախեցնել, ապա պայքարը հասավ այնտեղ, որ նրանք որոշեցին ոչ թե միմյանց վիրավորել, այլ դիմել ավելի խաղաղակիրք մեթոդի՝ գովազդել սեփական անձը, բայց ուրիշների շուրթերով: Աշխարհահռչակ երգիչ Ռիկի Մարտինը տեսահոլովակով կոչ արեց խվեարկել Էմիի եւ Միհրանի օգտին: Եվա Ռիվասի երգի շնորհանդեսին էլ Երեւան ժամանեց 1956թ. Շվեյցարիայում կայացած «Եվրոտեսիլ» երգի առաջին մրցույթի հաղթող Լիս Ասիան՝ ասելով, որ Եվան արժանի է մասնակցելու «Եվրոտեսիլին»: Ի դեպ, ըստ շրջանառվող լուրերի, երգչուհիների պրոդյուսերները հսկայական գումարներ են ծախսել նախապատրաստական աշխատանքների համար: Ասում են, որ Էմիին եւ Միհրանը ծախսել են մոտ 20.000 դոլար գումար շորի համար: Նմանատիպ գումար է ծախսել նաեւ Ռիվասի պրոդյուսերը:

Թե ով կդառնա հաղթող՝ պարզ կլինի փետրվարի 14-ին: Ոճային առումով երգերը տարբեր են: Ռազմիկ Ամյանի My love երգը հիշեցնում է արեւելյան երաժշտություն: Ունենալով հզոր ու գեղեցիկ ձայն՝ երգիչը կարող էր ընտրության հարցում ավելի ճիշտ որոշում կայացնել ու արաբական մուղամով երգ չներկայացնել հանդիսատեսին: Ժամանակակից ամերիկյան ոճում են ներկայանում Էմիին ու Միհրանը: «Հեյ» (Let me hear you say) երգը ամերիկյան փոփ ու ռեփի խառնուրդ է: Իսկ Եվա Ռիվասի Apricot Stone (ծիրանի կորիզ) կատարումը համեմված է արեւելյան սոուսով՝ արդեն պարտադիր դարձած դուդուկի ուղեկցությամբ: Խնդիրը այն է, թե եվրոպացի հեռուստադիտողն ինչպես կընկալի ծիրանի կորիզի հանդեպ հայ երգչուհու «պաշտամունքը»: Եթե երգն ուղղված է միայն սփյուռքահայ լսարանին, որ մայիսին հաստատ կարոտած կլինի ծիրանին, իհարկե, ճիշտ քայլ է, բայց եվրոպացին գուցե չհասկանա «Ծիրանի կորիզի» իմաստը:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ. Ի դեպ, կիրակի նախօրոք ներկայացված 10 մասնակիցների փոխարեն ելույթ կունենան 9: Երգչուհի Սոնյայի պրոդյուսերը հայտարարել է, որ նա չի մասնակցի մրցույթին առողջական խնդիրների պատճառով: Մի շարք ֆորումներում լուրեր են տարածվել, որ թուրք երգչուհի Հադիսեի երգերի կոմպոզիտորը հայտարարել է, որ Սոնյայի երգը Հադիսեի երգի պատճենումն է՝ չնչին փոփոխությամբ:

Գռեհկությունն ընդդեմ գեղագիտության

Կրկին սերիալների ու չափորոշիչների մասին

ՀՀ վաստակավոր դերասան Ազատ Գասպարյանն ու գրող-հրապարակախոս Մարինե Պետրոսյանը ծայրահեղ տեսակետներ ունեն հեռուստաթերի ու ՀՌԱՀ չափորոշիչների վերաբերյալ:

ՖՈՏՈԼՈՒՐ

«Կյանքում ամեն մի բան չափի մեջ է գեղեցիկ», ասում է Գասպարյանը: Ըստ դերասանի, եթերում խախտված է մարդկային պարտականությունների ներդաշնակությունը: «Շուներում մարդիկ են, որ ո՛չ համաշխարհային, ո՛չ էլ ազգային գեղագիտության ու մշակույթին են ծանոթ ու հայերենը ոտի տակ գցած ման են գալիս»: Ազատ Գասպարյանը ուսուցչուհի կնոջից հաճախ է լսում, որ դասամիջոցներին լինում են «ռազբորկաներ», տղաները դանակով են ման գալիս: Գասպարյանն այս ամենի մեղավոր համարում է հեռուստաթերն ու կրիմինալ բովանդակությամբ սերիալները:

«Դուք Հանրային խորհրդի անդա՞մ եք», հարցրեց Մարինե Պետրոսյանը: «Ոչ անդամ չեմ, ուղղակի ցավ եմ զգում, որ եթերում փողոցային հայհոյանք կա»:

Պետրոսյանն էլ դեմ է չափորոշիչների կիրառմանը, քանի որ տեղյակ է հայ իրականության առանձնահատկություններին: «Սա ընդամենը շանտաժ է: Հեռուստատեսությունում կա մրցակցություն, քաղաքական առումով չկա, բայց սերիալներում կա, վերջապես մի տեղ կա այդ մրցակցությունը: Տեսաք՝ Ա1+ին ոնց պատժեցին: Ով իրենց մարդը չէ՝ կփակեն: Եթե մի բան վատ է, մի՛ փակիր, դրա փոխարեն լավը ներկայացրու: Եթե արվեստի վատ գործ է, դրան լավով հակազդիր»:

Գրողը երկար ժամանակ դիտել է «Որոգայթ» հեռուստասերիալը: Ասում է՝ մակարդակը բարձր չէր, բայց վատ էլ չէր, միակ բացասականը սերիալում Ազատ Գասպարյանի մուտքն էր: «Ձեր կերպարն ամենաանբնական էր: Ֆիլմը դարձավ հնդկական կինո»:

«Իմ հայտնվելը անբնական էր, որովհետեւ սերիալում մարդկային հարաբերություններում մաքրություն չկար: Դրա համար էր իմ դերն անբնական: Մի պաշտոնյա անգամ ասաց, որ այդքան ազնիվ ու խղճով ոստիկան չի տեսել», ասում է Գասպարյանն ու հավելում, որ երեխաներին հենց նման հերոսներն են պետք՝ որպես հակակշիռ հանցագործներին:

«Ինչ է, երեխաները հիմա՞ր են, որ կեղծ քննիչն իրենց համար դառնա իդեալ»:

Գասպարյանը «Որոգայթում» հրաժարվել է խաղալ, որովհետեւ լեզվի անաղարտությունը չէր պահպանվում: Դերասանին չեն գոհացրել սերիալի հերոսների գռեհիկ արտահայտությունները, դիմել է ղեկավարությանը՝ փոխելու լեզուն, ստացել մերժում ու, որպես պատասխան, հրաժարվել մարմնավորել գնդապետին:

Թեպետ Պետրոսյանը դիտում է սերիալներ, սակայն ոգեշնչվում է միայն բարձր արվեստից, օրինակ՝ թատերական ներկայացումներից: Չի էլ հավակնում սերիալներում բարձր արվեստ փնտրելու: Համեմատում է այսօրվա սերիալներն ու ներկայացումները եւ առանձնակի տարբերություն չի տեսնում:

«Ինձ պետք է, որ արվեստը զարգանա, հեռուստաթերն ավելի գեղեցիկ ու բարոյական լինի», ասում է Գասպարյանը:

«Թողե՛ք այդ բարձրագոչ խոսքերը: Ձեր կոլեգաները ստանում են չնչին աշխատավարձ թատրոնում, ինչպե՞ս կարող եք ցանկանալ, որ սերիալները չլինեն, ձեր ընկերներն այդ կերպ գումար են վաստակում: Շատ ամոթ է», նկատեց Պետրոսյանը:

«Նրանք ստիպված են գնում այդ քայլին, բայց պետք է լինի ինչ-որ չափ այդ այլանդակության», շարունակեց դերասանը:

«Չափը չի նպաստի, կդիմեն կաշառակերության: Իմացե՛ք, դա ձեր դեմ էլ է ուղղվելու», սպառնաց գրողը:

Ազատ Գասպարյանը նկատում է, որ այդ այլանդակությանը վերջ տալու պահը հասունացել է. «Քայլում եմ Երեւանի փողոցներով ու այդպիսի մարդկանց չեմ տեսնում, որոնք կան սերիալներում»:

«Ձեր աչքերն են փակ», հեգնեց Պետրոսյանը:

«Ո՞նց ես ինձ հետ խոսում, ես գռեհկություն չեմ սիրում», բարկացավ դերասանը:

«Ձեզ օգտագործում են, նրանք կանեն, դուք էլ ծափ կտաք», շարունակեց գրողը:

«Ինձ համար ամեն ինչ պարզ դարձավ, մենք տարբեր ենք: Դուք գռեհկության կողմնակից եք, ես՝ գեղագիտության»:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՄ

Շաբաթական ամփոփ տվյալներ

Փետրվարի 8-ից 12-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 91,627,665 ԱՄՆ դոլար՝ 379.34 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 76,580,083 ԱՄՆ դոլար՝ 380.26 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 300,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 381.50 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 19,800,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 381.85 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Փետրվարի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 15.8 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 19.3 մլն ԱՄՆ դոլար:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է, որ 2009թ. դեկտեմբերի 29-ի «Ազգ» օրաթերթի «Մասնավորեցում» հավելվածի N239 (4381) թողարկման մեջ հայտարարված ՀՀ կառավարության 7.03.07թ.-ի N 280-Ն որոշմամբ լուծարվող «Արարատի քաղաքային կինոցանց» ՊՁ-ի հաշվեկշռում գտնվող «Ավարայր» կինոթատրոնի շենքի 2010թ. փետրվարի 18-ի եւ մարտի 5-ի աճուրդները դադարեցվում են:

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

Մրցույթի հրավեր 034/10/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Գյումրու պետական ճարտարապետական եւ Մարտունու պետական քոլեջներում դիմահարդարման ուսումնական սարքեր հիմնելու համար սարքավորումների մատակարարման նպատակով:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մարտի 04, ժամը 17:00:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«12» փետրվարի 2010 թ.
Հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Նոր Համբերդ գիտական կենտրոն»:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից՝ 22.11.2007թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 077927:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք.Եր., Հալաբյան 34 ա /5, հեռ. 35-20-08, 091-20-69-75:
4. Իրականացված ծրագրերը.

2009թ. ընթացքում շարունակվել են չափումները «Գամմա» եւ «Անի Ասեկ» սարքավորումների վրա «Արագած» եւ «Նոր Համբերդ» գիտական կայաններում. ստեղծվել է մոդեռնացված սցենտիլյացիոն դետեկտոր նեյտրոնների, գամմա քվանտների եւ էլեկտրոնների գրանցելու եւ անջատելու հնարավորությունները:

5. Ֆինանսավորման աղբյուրները. Ծրագրերի ֆինանսավորումը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ակադեմիայի Լեբեդեւի անվան ֆիզիկայի ինստիտուտի կողմից:
6. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝58 472.3 հազ.դրամ:
7. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝58 472.3 հազ. դրամ:

Հաստատված է.

«Նոր Համբերդ գիտական կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2010թ.հունվարի 12-ին կայացած նիստի կողմից:

Ա. Բարսեղյան

Ն. Մարտիրոսյան

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 12.02.2010 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	381.26
EUR	1	ԵՎՐՈ	517.71
RUR	1	Ռուս. ռուբլի	12.61
GEL	1	Վրաց. լարի	223.14

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.21.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: